

ՄԱՐԶԻԿ

հսլս

Մարզիկ

ՄճԼԸ ՐԻԱՅԻԿԵ ՏԻԻԵՐԵ
ՏՎԵՐԻՄ ԴԵՄԵԿԵ ԻՄՈՄՆԵՄ ԲԻՐՈՒ

marzig

SPORTS MAGAZINE

32ԲԴ ՏԱՐԻ, 2013, ԹԻԻ 12 (378) - VOL. XXXII N° 12

ԻՏՆԵ ԹԱՆԻԵ ԵՒ ԹՒԼԱԹՈՒՆ - ԵԾԾՐ ՐԳՄ 12



ՀԱՐՑՈՒՄ ՄԸ

«ՄԻՋՐԱՆ ՇԻՄՇԻՐԵԱՆ ՍԿԱՌԻՏԱԿԱՆ ՖՈՆՏ»ԻՆ ԿԸ ՆՈՒԻՐԵՆ

- | | |
|---|---|
| <ul style="list-style-type: none"> - Տէր եւ տիկին Զրաչ եւ Էլիզապէթ Սիսեռեան 10.000 \$ - Սթանպուլեան ընտանիք եւ զաւակները՝
Սեւան, Ասպետ եւ Կասիկ (Գանատա) 1.000 \$ - Տէր եւ տիկին Ատոմ եւ Սելլա Թնճուկեան 500 \$ - Տէր եւ տիկին Ժիրայր եւ Սրբուկ Սարգիսեան
(Մ. Նահանգներ) 500 \$ - Զ.Մ.Ը.Մ.ի Աւստրալիոյ 18րդ Շրջանային Ներկայա-
ցուցչական ժողովի մասնակիցներ 500 \$ - Զ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի Շրջանային
Վարչութեան անդամներ 300 \$ - Տէր եւ տիկին տոքթ. Շահէ եւ Անի
Ենիգոմշեան (Միացեալ Նահանգներ) 250 \$ - Տէր եւ տիկին Արմանտ եւ Թամար Քիլէճեան
(Մ. Նահանգներ) 250 \$ - Տէր եւ տիկին Վիգէն Աբելեան
(Միացեալ Նահանգներ) 250 \$ - Տէր եւ տիկին Զարեհ եւ Լէոնի Սարմազեան
(Գանատա) 250 \$ - Զ.Մ.Ը.Մ. Լոնտոն 250 \$ - Տէր եւ տիկին Յակոբ Խաչերեան 200 \$ - Տէր եւ տիկին Վարուժան եւ Անի Սերոբեան
(Գանատա) 200 \$ - Տէր եւ տիկին Յարութիւն եւ Ազնիւ
Չիլիմկիրեան (Ֆլորիտա) 200 \$ - ԼՕԽ-ի Շրջանային Վարչութիւն 200 \$ - Տէր եւ տիկին Արա Յակոբեան 200 \$ | <ul style="list-style-type: none"> - Տէր եւ տիկին Տիգրան եւ Մակի Պապիկեան 200 \$ - Տէր եւ տիկին ճորժ եւ Մարի Տազետեան
(Ամման) 200 \$ - Տէր եւ տիկին Կարպիս եւ Անահիտ
Գոլանճեան (Գանատա) 200 \$ - Տէր եւ տիկին Գրիգորիս եւ Գեղուի Պողարեան 200 \$ - Եղբ. Անդրանիկ Պահարեան (Ֆրանսա) 200 \$ - Զ.Մ.Ը.Մ.ական մը 200 \$ - Զ.Մ.Ը.Մ. Պուլկարիա 150 \$ - Զ.Մ.Ը.Մ.ի Գէմարիճի մասնաճիւղի Վարչութիւն 150 \$ - Տէր եւ տիկին Յակոբ եւ Սոնիա Ենիգոմշեան
(Փարիզ) 100 \$ - Տէր եւ տիկին Յակոբ Պետիրեան (Քուէյթ) 100 \$ - Տէր եւ տիկին Յարութ Պետիրեան (Քուէյթ) 100 \$ - Տէր եւ տիկին Յակոբ Պէրպէրեան (Քուէյթ) 100 \$ - Տէր եւ տիկին Յակոբ Մելքիսէթեան (Քուէյթ) 100 \$ - Տէր եւ տիկին Արօ եւ Սիլվա Մոսիկեան 100 \$ - Տէր եւ տիկին Գեորգ Մկրտիչ 100 \$ - Տէր եւ տիկին Պարգեւ Խանճեան 100 \$ - Տէր եւ տիկին Վահէ եւ Ռիթա Թղլլեան
(Գանատա) 100 \$ - Տէր եւ տիկին Զրաչ եւ Զելէն Նաճարեան
(Գանատա) 100 \$ - Տէր եւ տիկին Րաֆֆի Էմմոզլեան 100 \$
(Շար.ը տեսնել էջ 32) |
|---|---|

ՄԱՀԱՉԳ

Զ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութիւնը խոր կակիծով կը գուժէ վաստակաշատ Զ.Մ.Ը.Մ.ական եւ Կեդրոնական Վարչութեան գանձապահ՝

ԵՂԲ. ՄԻՋՐԱՆ ՇԻՄՇԻՐԵԱՆԻ

անակնկալ մահը, որ պատահեցաւ Կիրակի, 16 Փետրուար 2014-ին, Պէյրութի մէջ:

ՄԱՀԱՉԳ

«Մարգիկ» պաշտօնաթերթի խմբագրութիւնն ու անձնակազմը խոր ցաւով կը գուժեն Կեդրոնական Վարչութեան իրենց ներկայացուցիչին՝

ԵՂԲ. ՄԻՋՐԱՆ ՇԻՄՇԻՐԵԱՆԻ

անակնկալ մահը, որ պատահեցաւ Կիրակի, 16 Փետրուար 2014-ին, Պէյրութի մէջ:

ՄԱՀԱՉԳ

Զ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի Շրջանային Վարչութիւնը խոր ցաւով կը գուժէ Շրջանային Վարչութեան նախկին անդամ եւ նուիրեալ Զ.Մ.Ը.Մ.ական՝

ԵՂԲ. ՄԻՋՐԱՆ ՇԻՄՇԻՐԵԱՆԻ

անակնկալ մահը, որ պատահեցաւ Կիրակի, 16 Փետրուար 2014-ին, Պէյրութի մէջ:

ՄԱՀԱՉԳ

Զ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի Շրջանային Սկաուտական Խորհուրդը խոր ցաւով կը գուժէ Շրջանային Սկաուտական Խորհուրդի նախկին անդամ եւ Շրջանային նախկին ընդհանուր խմբապետ՝

ԵՂԲ. ՄԻՋՐԱՆ ՇԻՄՇԻՐԵԱՆԻ

անակնկալ մահը, որ պատահեցաւ Կիրակի, 16 Փետրուար 2014-ին, Պէյրութի մէջ:



Թիւիւն հիւն երը



Մարզական ամսաթերթ
Հրատարակութիւն՝ Հ.Մ.Ը.Մ.ի
ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ


32ԴՂ ՏԱՐԻ, 2013, ԹԻ 12 (378)

ԽՄԲԱԳԻՐ
Վիզէն Աւագեան

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿԱԶՄ
Սեւան Նազարեան (Ֆրանսա),
Սեդա Պէշեան-Սաղպազարեան,
Մարտ Քէշիշեան (Արեւմտեան Մ.
Նահանգներ), Յակոբ Խաչատուրեան
(Արեւելեան Մ. Նահանգներ), Տիրան
Շահինեան (Գանատա), Ռազմիկ
Յովհաննիսեան (Հայաստան)

ՎԱՐՉԱԿԱՆ ԿԱԶՄ
Պատրիկ Կիւլպէնկեան
Գրիգորիս Պողարեան
Արօ Մոսիկեան

Էջադրում - Արշօ Պալեան
Գրաշարութիւն - Շողիկ Պոյաճեան
Colour Seperation - Photogravure Paklayan
Կողքի Ձեւաւորում - Տպագրութիւն



ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ՀԱՍՑԷ
Պուրճ Համուտ, ճինիշեանի Թաղ
«Սեւան» Շէնք, Գ. Յարկ
Հեռ: 01/248043, Fax: 01/260117
E-mail: marzig@homenetmen.org
P.O. Box: 80486 B. Hammoud, Lebanon

ՏՐԻՈՒՄ

Լիբանանի մէջ թերթին
հատավաճառի սակն է 4000 Լ.ո.:
Տարեկան բաժանորդագրութեան սակ
ճշդուած է 48000 Լ.ո.:
Լիբանանէն դուրս թերթին
բաժանորդագրութիւնը
կը կատարեն Հ.Մ.Ը.Մ.ի Սեկուսի
եւ Շրջանային Վարչութիւնները:
Թերթը ուղղակի Լիբանանէն
կը ստացուի անձնական
բաժանորդագրութեամբ
(Տարեկան սակ՝ Միջին Արեւելեան
եւ Եւրոպական երկիրներ \$70,
Ամերիկա եւ Աւստրալիա՝ \$75):



16

Հ.Մ.Ը.Մ.ԱԿԱՆ ԿԵԱՆՔ

- Փոխան Խմբագրականի 2
- Հրատեչտի խօսք 3
- Վկայութիւններ 5
- Ցաւակցագիրներ 11
- Պատգամ 20
- Անդրադարձ 24
- Մասնաճիւղէ Մասնաճիւղ 27
- Մեր Կորուստները 34



34

ԲԱԺԻՆՆԵՐ

- Միջազգային 26
- Մանկապատանեկան 38
- Տարբեր Հայեացքով 40



27

Nike's Photo



37



Հ Ա Ր Ց Ո Ւ Մ Մ Ը

ՓՈՒՆԱՆ ԽՄԲԱԳՐԱԿԱՆԻ

ՀԱՐՑՈՒՄ ՄԸ

(ԵՂԲ. ՄԻՀՐԱՆ ՇԻՄՇԻՐԵԱՆԻ ՄԱՀՈՒԱՆ ԱՌԻԹՈՎ)

Ոչ եւս է եղբայր Միհրան Շիմ-
շիրեան: Ա՛լ չկայ Հ.Մ.Ը.Մ.ի
Կեդրոնական Վարչութեան
բազմավաստակ անդամը,
չրջահայեաց ղեկավարը,
հաւատաւոր միութենականը, ժրաջան
գանձապահն ու «Մարգիկ» պաշտօնա-
թերթի ներկայացուցիչը: Մեծ մը միու-
թեան մեծերէն, մեծ՝ իր նուիրումով, մեծ
իր վաստակով ու մեծ իր արժանիքնե-
րով:

Բայց արդեօք մեծերը կը մեռնի՞ն.
Յովհաննէս Շահինեանը, Նշան Թի-
սիւզեանը, Վարդգէս Տէր Կարապետեա-
նը, Տոքթ. Միսաք Արզումանեանը մե-
ռա՞ծ են...

Մեծերը չեն մեռնիր, որովհետեւ ա-
նոնք ապագայի հիմնադիրները կը հան-
դիսանան, հետեւաբար անոնց գործերը
կը շարունակուին նոյնիսկ իրենց բացա-
կայութենէն ետք:

Եղբայր Միհրան Շիմշիրեան Հ.Մ.-
Ը.Մ.ի ապրող սերունդի վերջին մեծերէն
էր, այն հազուադէպ օրինակներէն,
որոնց կեանքն ու վարքը կրնան ուղե-
ցոյց ըլլալ գալիք սերունդներուն:

Մեծերը մեծ են իրենց գործով, խօս-
քով, մտածումով եւ շրջապատին հետ
իրենց յարաբերութիւններով: Եղբայր
Միհրան մեծ էր բառին իսկական առու-
մով, որովհետեւ սկաուտութեան հիմ-
նադիրին կեանքի սկզբունքը դարձու-
ցած էր ի՛րը: Պէյտըն Փաուըլի նման ան
կը հաւատար, որ կեանքի երջանկու-
թիւնը չի կայանար հարստութեան եւ
յաջողութեան մէջ, այլ՝ իսկական եր-
ջանկութիւնը մարդ կը գտնէ ուրիշնե-
րուն օգտակար դառնալուն մէջ: Ան ապ-
րեցաւ այս համոզումով, տուաւ ի՛նչ որ
ունէր, տուաւ անսակարկ, հասոյթի գըլ-
խաւոր աղբիւր ունենալով իր հարուստ
հոգին:

Միութենական պարտականութեամբ
եղբայր Միհրան աշխարհը շրջեցաւ քա-

նի մը անգամ: Ան ծանօթացաւ Հ.Մ.Ը.Մ.ի
համահայկական կառոյցի բոլոր միա-
ւորներուն: Վերջին կէս դարուն չպատա-
հեցաւ համա-Հ.Մ.Ը.Մ.ական նախածեռ-
նութիւն մը, որուն մասնակիցը, կազմա-
կերպիչը կամ աջակիցը չեղաւ ան: Եղ-
բայր Միհրան ապրեցաւ ամէնուն շուն-
չով, բոլորին համար: Ունեցաւ առաքե-
լութեան մը ձգտումը, հաւատաց արժէք-
ներու, որոնք ո՛չ ժամանակ կը ճանչ-
նան, ո՛չ ալ աշխարհագրական սահ-
ման: Ան գործեց անմնացորդ նուիրու-
մով եւ իր միութեան տուաւ նկարագիր
ու դիմագիծ, իր ժողովուրդին՝ պատիւ
ու հպարտութիւն:

Եղբայր Միհրան հաւատաց, որ յա-
ռաջդիմելու, թրծուելու եւ ազգովին կա-
տարելագործուելու խթան մըն է Հ.Մ.-
Ը.Մ.ը: Իսկ Հ.Մ.Ը.Մ.ը պահողը նիւթականը
չէ, որքան՝ ոգեղէն արժէքներու հարըս-
տութիւնը, բարոյական այն ուժը, որմով
կերտուած է այս միութեան փառքը ա-
ռաւելաբար:

Դժուար է, բայց պարտաւոր ենք
հաշտուիլ մեր մեծ եղբօր մեծ կորուս-
տին հետ, ի վերջոյ «Կեանքը իր ճամ-
բով, մահը իր ճամբով»: Սակայն, եղ-
բայր Միհրանի եւ իր նմաններու կորուս-
տին հետ չենք կրնար չմտաւորուիլ
իրեն արժանի յաջորդներու ապագա-
յով, իր եւ իր սերունդին գործը նոյնքան
նուիրումով եւ բարեխղճութեամբ շա-
րունակելու կարելիութեամբ:

Ի՞նչ ընել եւ ի՞նչպէս ընել, ուրեմն, որ-
պէսզի անտէր չմնայ եղբայր Միհրանին
եւ իր նմաններուն միութենական ժա-
ռանգութիւնը, որպէսզի պատրաստը-
ւած նոր ուժեր լեցնեն պարպուած դիր-
քերը, որպէսզի արշալոյսները յաջոր-
դեն վերջալոյսներուն:

Հարցում մը, որուն պատասխանը եղ-
բայր Միհրան պիտի փափաքէր ունենալ
անպայման:

ԶՈՀԱԲԵՐՈՒԹԵԱՆ, ՆՈՒԻՐՈՒՄԻ ԵՒ ԱՇԽԱՏԱՄԻՐՈՒԹԵԱՆ ՕՐԻՆԱԿԸ

(ԵՂԲ. ՄԻՀՐԱՆ ՇԻՄՇԻՐԵԱՆԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ)

Գառնիկ Սկրտիչեան ՊՈՒՐԾ ԶԱՍՈՒՏ

Դժուար է յիշատակի ու յարգանքի վկայութիւն տալ Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անդամ եղբայր Միհրան Շիմշիրեանի մասին, որ 67 տարւան Հ.Մ.Ը.Մ.ական ծառայութեամբ բեռնաւորուած՝ քառասուն օրեր առաջ անակնկալօրէն հրաժեշտ տուաւ իր հարազատներուն եւ իր սիրած միութեան:

Ի՞նչ ըսենք, ի՞նչպէս մխիթարենք մենք մեզ, երբ տակաւին չենք հաշտուած եղբ. Միհրանի կորուստի գաղափարին հետ: Կ'ուզենք հաւատալ, թէ ուր որ է ան, այսօր, վաղը, պիտի հեռաձայնէ, բարեւէ կամ որպիսութիւն հարցնէ՝ իրեն յատուկ ժպիտով, հաղորդականութեամբ ու խանդավառութեամբ:

Ո՛վ չէր ճանչնար եղբայր Միհրանը, 71-ամեայ, բայց միշտ առողջ ու կայտառ Հ.Մ.Ը.Մ.ականը, որուն կեանքը ամբողջական նուիրաբերում մը եղաւ հայ սկստութեան, հայ երիտասարդութեան, հայութեան եւ Հայաստանին:

Սկզբունքային, անշահախնդիր ու առաքինի մարդ էր վարք ու բարքով:

Հայ՝ բառին վաւերական առումով:
Հ.Մ.Ը.Մ.ական տիպար՝ իր հարազատ կերպարով:
Անբացատրելի հմայք մը ունէր եղբայր Միհրան: Բոլորը կը սիրէին ու կը յարգէինք զինք:

Միութենական կեանքի մարդ էր ան, ողն ու ծուծով Հ.Մ.Ը.Մ.ական:

Տեղ մը դժուարութի՞ւն կար, տաղնա՞պ գոյութիւն ունէր, եղբայր Միհրանը հոն էր եւ շրջահայեաց մօտեցումով հարցերը բարեօք կերպով լուծելու շնորհը ունէր:

Ժողովներու մէջ տեսակէտներու բախում եւ երկուութի՞ւն կար, լուծումը եղբայր Միհրանին մօտն էր, ոսկէ միջինը գտնելու բացառիկ կարողութիւնը ունէր:

Կանոնագրային-կազմակերպական հարցերու շուրջ շփոթ



կար, դարձեալ եղբայր Միհրանն էր, որ իւրաքանչիւր հարցի համոզիչ լուսարանութիւնն ու բացատրութիւնը ունէր:

Հաճելի ժողովական էր ան, սիրելի զրուցակից ու մանաւանդ՝ փնտռուած սեղանակից:

Մեծ էր ան իր համեստութեամբ եւ խոնարհ էր ան իր պարկեշտութեամբ: Ան կը պատկանէր մեծերու սերունդին:

Մեծ էր իր սրտով, հոգիով եւ բոլորը ընդունելու իր լայնամտութեամբ: Մանրուք հաշիւներու եւ տեղայնական մօտեցումներու մարդը չէր: Գործի եւ միայն գործի նուիրեալն էր ան, որ ո՛չ շահ, ո՛չ ալ փառք կը փնտռէր: Գործն էր, որ զինք կը պահէր նուիրաբերումի պատուանդանին վրայ, իբրեւ Հ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի Երջանային Աքելլայ, Երջանային Սկստական խմբապետ, Երջանային Ընդհանուր խմբապետ, երկու տարի Հ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի Երջանային Վարչութեան եւ 23 տարի ալ Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անդամ:

Արժանիքներու մարդն էր եղբայր Միհրան: Իսկ արժանիքները ցեղ ու կրօնք չեն ճանչնար: Ահա թէ ինչո՞ւ ան փնտռուած եւ սիրուած էր նաեւ լիբանանեան շրջանակներու կողմէ: Ի՞ զուր չէ, որ 26 տարի ան մաս կազմած էր Լիբանանի սկստական Ֆետերասիոնին եւ Լիբանանը ներկայացուցած էր արաբական ու միջազգային բազմաթիւ համագումարներու՝ Լիպիա, Օման, Անգլիա, Սենեկալ եւ Մ. Նահանգ-

ներ: Առ ի գնահատանք իր ծառայութիւններուն, ան արժանացած էր Լիբանանի ըսկառուտական ֆեաերասիոնի եւ լիբանանեան պետութեան երիտասարդութեան եւ մարմնակրթութեան նախարարութեան բարձրագոյն շքանշաններուն:

Հ.Մ.Ը.Մ.ի համահայկական կառույցին մէջ դժուար թէ գտնուի մէկը, որ իրեն չափ ծանօթութիւն եւ շիրուռութեամբ ըլլայ միութեան աշխարհասփիւռ անդամներուն հետ: Բարեկամութիւններու մարդն էր եւ Ամերիկաներէն մինչեւ Եգիպտոս, Պուլկարիայէն մինչեւ Արժանթին, ունէր Հ.Մ.Ը.Մ.ական հարազատներու հսկայ շրջանակ մը, որ իր մեծագոյն հարրատութիւնն էր, անկասկած:

Հաւատարիմ բարեկամ էր եւ հաւատարմութիւնը իր կեանքի գլխաւոր սկզբունքներէն մէկն էր:

Հ.Մ.Ը.Մ.ի կեդրոնական Վարչութեան վեց կազմերու անդամակցած ըլլալով, վերջին 30 տարիներուն, եղբայր Միհրան միութենական զանազան առաքելութիւններով գտնուած էր Հ.Մ.Ը.Մ.ի կազմակերպական գրեթէ բոլոր շրջանները: Մասնակցած էր Հ.Մ.Ը.Մ.ի Մերձաւոր Արեւելքի Շրջանային Վարչութեան գրեթէ բոլոր Շրջանային Ժողովներուն, համա-Հ.Մ.Ը.Մ.ական բազմաթիւ բանակումներու, մարզախաղերու եւ Պատգամաւորական Ժողովներու, միշտ եւ ամէնուրեք ստանձնելով կեդրոնական դերակատարութիւններ: 2007-ին ան արժանացած էր միութեան բարձրագոյն՝ «Արժանեաց» շքանշանին:

Մեծ է եղբայր Միհրանին երախտիքը Հայաստանի Ազգային Սկառուտական կազմակերպութեան ստեղծման եւ զարգացման մէջ: Սկառուտական միջազգային ընտանիքին հետ իր ծանօթութիւններուն բերումով, ան կարեւոր դեր ունեցած է Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ի միջազգային սկառուտական շարժումի անդամակցութեան նախաքայլերուն մէջ:

Եղբայր Միհրանին երախտիքը նոյնքան մեծ է Լիբանանի ազգային կեանքին: Իբրեւ գաղափարական մարդ ու համագրայնական ան բեղուն ծառայութիւն ունեցած է էշրէֆիէի հայութեան: Եղած է ազգային երեսփոխան եւ երկար տարիներ մաս կազմած է Ազգային իշխանութեան տարբեր մարմիններուն՝ միշտ հաւատաւոր ու ամբողջական ծառայութեամբ:

Իր գործին բերումով, ան եղած է գաղութի ազգային գրեթէ բոլոր հաստատութիւններուն մէջ՝ Ծերանոց, Լ.Օ.Խ., Գարակէօզեան, Ճեմարան, Այնճարի քաղաքապետութիւն, իր հետքը եւ քաղցր յիշատակները ձգելով ամէն տեղ:



Եղբայր Միհրանի վերջին լուսանկարը: Մահէն երկու շաբաթ առաջ, Հ.Մ.Ը.Մ.ի կեդրոնական Վարչութեան կեդրոնատեղիին մէջ, Արեւմտեան Ս. Նահանգներու Թեմի Առաջնորդ Մուշեղ Արք. Մարտիրոսեանէն յուշանուէր ստանձնած պահուն:

Կ'ըսեն՝ անփոխարինելի մարդ չկայ: Իսկ ո՞վ պիտի փոխարինէ եղբայր Միհրանը եւ իր նմանները, որոնք օրէ օր հրաժեշտ կու տան մեզի՝ մարդու սով ստեղծելով մեր շուրջ, մեր մէջ. գաղափարական, միութենական, ըսկզբունքային եւ հայրենասէր մարդու սով: Իր եւ նմաններուն օրինակները սերունդներու համար պիտի ըլլան ուղեցոյց՝ անսահման գոհաբերութեան, նուիրումի, աշխատասիրութեան եւ յարատեւութեան:

Յանուն Հ.Մ.Ը.Մ.ի համահայկական ընտանիքի 104 մասնաճիւղերուն եւ 26 հարգար հաշուող անդամներուն, Հ.Մ.Ը.Մ.ի կեդրոնական Վարչութիւնը քառասուն օրէ ի վեր խորապէս կը սգայ իր

անդամին՝ բազմավաստակ Հ.Մ.Ը.Մ.ական եղբայր Միհրան Շիմշիրեանին մեծ կորուստը եւ կը խոնարհի անոր վաստակին առջեւ:

Կեդրոնական Վարչութիւնը կը վշտակցի միութեան կազմակերպական բոլոր միաւորներուն, որոնք անցնող շաբաթներուն ցաւակցազիրներով ոգեկոչեցին Միհրան Շիմշիրեանին անթառամ յիշատակը: Շնորհակալութիւն բոլորին: Շնորհակալութիւն նաեւ Հայաստանի Հանրապետութեան Սփիւռքի նախարար Հրանտշ Յակոբեանին, որ յատուկ ցաւակցազիրով բաժնեկիցը դարձաւ Հ.Մ.Ը.Մ.ի սուգին:

Սիրելի՛ եղբայր Միհրան, երթդ բարի դէպի Հ.Մ.Ը.Մ.ականներու պանթէոն: Գնա, գտիր Վարդգէս Տէր Կարապետեանը, տոքթ. Միսաք Արզումանեանը, Կարօ Թիւթիւնճեանը, Երուանդ Տէմիրճեանը, Յովհաննէս Տէր Յարութիւնեանը, Պետրոս Շեմմեսեանը եւ քեզի սիրելի եղբայրներդ ու պատմէ բոլորին, որ Հ.Մ.Ը.Մ.ը ունեցաւ նոր անմահ մը, որ 16 Փետրուար 2014-ին միացաւ «նահատակ ցեղի անմահներ»ու փաղանգին, դէպի յաղթանակ ճամբուն վրայ կեանք մը ամբողջ սպառելէ ետք:

Հողը թեթեւ գայ վրադ, անգին եղայր:
Հ.Մ.Ը.Մ.ը միշտ պիտի յիշէ քեզ:

«ՄԱՐԶԻԿ»ԻՆ ԿԸ ՆՈՒԻՐԵՆ


- Տէր եւ տիկ. Ատոմ եւ Սելլա Թնճուկեան (Լոնտոն) 500 \$
- Տէր եւ տիկ. Գրիգորիս եւ Գեղուհի Պողարեան (Պէյրութ) 300 \$

ԴՈՒՆ ԱԼ ՈՒՍՈՒՑԻՉ ԷԻՐ...

(ԵՂԲ. ՄԻՀՐԱՆ ՇԻՄՇԻՐԵԱՆԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ)

Գրիգորիս Պողարեան ՊԵՅՐՈՒԹ

Այսօր, երբ փակ աչքերով դէմ առ դէմ կը գտնուիս այն գունագեղ եւ առինքնող խճանկարին, որ կը պատկերէ Հ.Մ.Ը.Մ. կոչուող աշխարհատարած անզուգական կազմակերպութիւնը, չես կրնար նկատի չառնել, թէ հոն խճանկարին մէջ պակսող բան մը կայ: Նկարին ամբողջականութիւնը խաթարուած չէ, ոչ ալ հաղորդականութիւնը կամ պատգամը նուազած, բայց



խճաքար մը կը պակսի. խճաքար՝ որ եղբայր Միհրան Շիմշիրեան կ'անուանէր: Խճաքար, որ գետեղուած էր համայնապատկերին ճիշդ այն հատուածին մէջ, ուր սփիւռքահայութեան սիրտը ներկայացնող խճաքարերը ներդաշնակօրէն կը միանային Հ.Մ.Ը.Մ.ի միտքը՝ կեդրոնական Վարչութիւնը ներկայացնող խճաքարին:

Արդ, զարմանալի չէ որ նոյնիսկ խճաքարը, քարեղէն ըլլալով հանդերձ, կրնայ փշուրի, մանաւանդ երբ անխնայ հարուածներ իրարու կը յաջորդեն՝ գրեթէ առանց դադարի: Հարուածներ, որոնք չէին կրնար իրենց ժխտական ու աւերիչ ազդեցութիւնը չթողուլ եղբ. Միհրանի փափուկ եւ զգայուն սրտին վրայ, եւ եթէ չըլլար անոր կրանիթեայ կամքը եւ անդրդուելի վճռակամութիւնը, սիրտը շատ առաջ տեղի տուած պիտի ըլլար: Բայց եղբ. Միհրան, հաւատաւոր Հ.Մ.Ը.Մ.ականը, կառչած մնաց կեանքին՝ այնքան ատեն որ կրնար, որովհետեւ գիտեր թէ տակաւին տալիք ունի շատերուն: Տալիքները կը սկսէին տունէն, ուր եղբ. Միհրան բաժնեկից ամուսին էր, հոգածու հայր, նուիրեալ մեծ հայր եւ գուրգուրոտ հարազատ: Տալիք ունէր գործատեղիէն ներս եւ մասնագիտութեան բերումով, ի մասնաւորի ազգային-միութենական կազմակերպութիւններու հաշուապահական-տոմարակալական գործողութիւններու կապակցութեամբ: Տալիք՝ ազգապահպանման եւ ազգակերտումի զանազան մարզերէն ներս գործող միութիւններու ու մարմիններու, միշտ ալ առիւծի բաժինը վերապահելով Հ.Մ.Ը.Մ.ին, որուն շարքերուն միացած էր որպէս գայլիկ, եւ որմէ կը բաժնուէր ակամայ, աւելի քան կէս դար ետք, որպէս պատկառելի աւանդ ունեցող կեդրոնական Վարչութեան անդամ:

Եղբ. Միհրան Հ.Մ.Ը.Մ.ական իր կեանքին գրեթէ ամբողջ ընթացքին տուաւ, տուաւ եւ փոխարէնը պահանջեց որ ստացողները իրենց կարգին եւ նոյնքան բծախնդրութեամբ տան յաջորդներուն: Տուաւ կակուղ թաթիկէն մինչեւ տարազաւորներու բարձրագոյն դիրքերը գրաւողներուն: Տուաւ նորագիր Հ.Մ.Ը.Մ.ականին եւ անփորձ վարչականին: Եղաւ ուղղութիւն տուող, սխալներ սրբագրող եւ շինիչ քննադատութիւններ կատարող: Յաճախ եզակի համբերատարութեամբ եւ երբեմն ալ՝ պոռթկացող ցասումով, մանաւանդ երբ խախտումներ կը նկատէր գաղափարախօսական մակարդակի վրայ կամ ծրագիր-կանոնագիրի թերի գործադրութեան ժամանակ:

Այո, եղբ. Միհրան, եթէ ես մասնագիտութեամբ ուսուցիչ եմ, ապա պարտիմ ընդունիլ, թէ դուն ալ ուսուցիչ էիր իրաւամբ, թէկուզ առանց դասարանի ու դասագիրքի, բայց եւ այնպէս՝ ուսուցիչ: Ուսուցիչ, որուն խնամատար դաստիարակութեան քովէն անցած երիտասարդ Հ.Մ.Ը.Մ.ականներու հոյլ մը այսօր Սփիւռքի տարածքին նուիրուած է ազգաչէն աշխատանքի: Հետեւաբար, երբ այսօր կը յիշենք քեզ, ճիշդ է արցունքի կաթիլներ ակամայ կը փորձեն սահիլ մեր այտերն ի վար, սակայն յուզումը անմիջապէս տեղի կու տայ անյապաղ գործը շարունակելու տրամադրութեան դիմաց: Այն գործը, որուն նուիրած էիր կեանքիդ թերեւս մեծագոյն մասը: Ծարունակելու գործը նոյն վճռակամութեամբ եւ համատեղ գործակցութեամբ բազմաթիւ Հ.Մ.Ը.Մ.ականներու, որոնցմէ շատերուն մէջ քեզմէ ներկայ է մասնիկ մը, որ գրաւականն է յիշատակդ վառ պահելու, սիրելի՛ եղբայր:

ԲՈՒՈՐԻՍ ՇԱՏ ՄԻՐԵԼԻ ԵՂԲԱՅՐ ՄԻՆՐԱՆԸ

Ժիրայր Սարգիսեան
ՍԱՆ ՖՐԱՆՍԻՍԿՈ

Այդ առաջում, եղբ. Միհրանին մահուան գոյժը ստանալով բնագոյաբար համացանցին դիմելով ապշանքով կրկնակիօրէն հաստատեցի լուրը, եւ հակառակ եղելութեան հաստատումին, տիկինս եւ ես միամտաբար կը յուսայինք հանդիպիլ պատահածը ժխտող նոր լուրի մը, որ բնաւ չեկաւ... եւ այդ օրը անհամեմատօրէն երկար թուեցաւ...

Եղբայր Միհրանին մասին զրուցելու եւ հոգեվիճակս փառատելու նպատակով դիմեցի իր եւ իմ սերտ գործակիցներու՝ եղբայրներ Գօգօ Պալեանին եւ Շահէ Ենիգոմչեանին:

Տատամսումս յաղթահարելով խօսեցայ նաեւ տիկնոջը՝ Շաքէին հետ, փորձելով զինք մխիթարել ամուսնոյն անակընկալ եւ վաղահաս կորուստին համար, սակայն իրողութեան ծանրութիւնը եւ դառնութիւնը խօսքով չէին սփոփուէր...

Այդ օր, եղբ. Միհրանին հետ տասնամեակներու վրայ երկարող Հ.Մ.Ը.Մ-ական մեր կեանքի եւ գործակցութեան յիշատակները սկսայ պեղել - երբ ինք փոքր տարիքին, Դամասկոսէն, սուրիական սկառտական կազմին հետ կը մասնակցէր Յունաստանի մէջ կայացող համաշխարհային սկառտական բանակումին: Ապա, իր չափահաս տարիքին, Լիբանան փոխադրուելով Հ.Մ.Ը.Մ-ի ծառայութիւնը կը դարձնէր իր կեանքին կոչումը, սկիզբը մաս կը կազմէր Պէյրութի մասնաճիւղի Սկառտական Խորհուրդին, ապա՝ արաբերէն լեզուի իր հմտութեան շնորհիւ միութիւնը կը ներկայացնէ հոն ուր անհրաժեշտ էր:

Այնուհետեւ, աստիճանաբար բարձրանալով կը ստանձ-

նէր Հ.Մ.Ը.Մ-ի համակարգին բարձրագոյն մարմիններուն ծառայութիւնը, յատկապէս հաշուապահական իր անթերի հմտութիւնը ի սպաս դնելով երկար տարիներ: Պարբերաբար իրեն կը վստահէր նաեւ Հ.Մ.Ը.Մ-ի համաշխարհային կառուցին հետ յարաբերութիւն մշակելու Հ.Մ.Ը.Մ-ի կեդրոնական վարչութեան խօսքը, ակնկալութիւններն ու թելադրանքները փոխանցելու պարտականութիւնը:

Եղբայր Միհրան իր հաղորդական, խոհեմ եւ խոնարհ խառնուածքով մտիկ կ'ընէր զինք դիմողներուն, նաեւ մտիկ ընել կու տար իր համոզումներն ու խորհուրդները:


Իր էութենէն Հ.Մ.Ը.Մ-ի սկառտական դաւանանքը գործնապէս կ'արտացոլար ընկերային թէ պաշտօնական բոլոր տեսակի յարաբերութիւններու մէջ, բանակումի խարոյկին շուրջ բոլորուած արի-արենոյշներու ուրախ պահերուն իր մասնակցութիւնը բերելով իր քաղցր ձայնով, կամ Հ.Մ.Ը.Մ-ի պատմութեան եւ էութեան մասին իր կատարած բազմաթիւ դասախօսութիւններով:

Լոս Անճելըս կատարած իր վերջին այցելութենէն վերադարձի նախօրէին, ան ցաւ յայտնեց որ յայտագիրի խճողումի պատճառով Սան Ֆրանսիսքօ չի կրնար այցելել եւ մեր խօսակցութիւնը փակելէ առաջ ըսաւ. «Չեմ գիտեր ինչո՞ւ մեր եղբայրները այդքան արժէք կու տան ինծի»: Ըսի՝ Միհրան ինչո՞ւ կը զարմանաս, բացի քեզմէ, Հ.Մ.Ը.Մ-ի ընտանիքը շատ լաւ կը զնահատէ քու վաստակը եւ արժէքը, եւ յառաջիկային անպայման տեսնուելու խոստումով աւարտեցինք մեր խօսակցութիւնը:

Աւա՛ղ, լաւ ցանկութիւնները մարդկային տենչերէն բխելով հանդերձ, անոնց իրագործումը որեւէ մէկու նախատեսութենէն դուրս է:

Սիրելի՛ եղբայր Միհրան, կեանքէն անակնկալ բաժանումը սուգի մատնեց շատ սիրած ընտանիքդ, հարազատներդ եւ Հ.Մ.Ը.Մ-ի ողջ ընտանիքը, սակայն կեանքի օրինակդ առաջնորդող դեր պիտի ունենայ Հ.Մ.Ը.Մ-ական յաջորդական սերունդներու:

Յիշատակդ անթառամ:



1998. Դասախօսութիւն Գահիրէի Հ.Մ.Ը.Մ. «Արարատ»ի ակումբին մէջ:

ԱՆՇԱՀԱԽՆԴԻՐ Հ.Մ.Ը.Մ.ԱԿԱՆԸ՝ ԵՂԲ. ՄԻՀՐԱՆ ՇԻՄՇԻՐԵԱՆ

**Տոթք. Շահե Ենիգոմջեան
ԼՈՍ ԿԱԹՈՍ, ԳԱԼԻՖՈՐՆԻԱ**

Բախար ունեցած եմ մօտէն ծանօթանալու եղբ. Միհրան Շիմշիրեանի կեանքին ու գործունէութեան տարբեր երեսներուն, յատկապէս որպէս նուիրեալ հայ եւ անշահախնդիր ազգային-միութենական գործիչ:

Եղբայր Միհրանին հետ մեր բարեկամութիւնը սկսաւ պատանի տարիքէս, 1965-էն, երբ ան Դամասկոսէն Պէյրութ վերադարձաւ: Ան ստանձնեց Հ.Մ.Ը.Մ-ի Պէյրութի մասնաճիւղի Աքելայի պաշտօնը եւ շուտով բարձրացաւ շրջանային մակարդակի պաշտօններու: Տարիները մեզի առիթը ընծայեցին զանազան ձեւերով գործակցելու: Ես տեղափոխուեցայ, բայց մեր կապը մնաց ամուր, մեր ընկերութիւնը զարգացաւ եւ գործակցութիւնը մնաց անխախտ:

Եղբ. Միհրան հաղորդակից, հետաքրքիր եւ ընկերային էր: Իր համոզումները՝ հաստատ, իր միութեան հանդէպ նուիրումը՝ անսակարկելի, իր կապը ազգին, եկեղեցւոյ եւ իր գաղափարական ընտանիքին հետ՝ հետեւողական եւ անբիծ: Ընտանիքին՝ նուիրեալ ամուսին մըն էր եւ իր զաւակներով հպարտ հայր մը: Իր անմիջական շրջանակէն շատերուն համար մեծ եղբայր էր, ուրիշներու՝ խորհրդատու, իսկ բոլորին՝ անկեղծ ընկեր:

Հ.Մ.Ը.Մ-ի համագաղութային կառոյցի հաստատումէն ետք, եղբ. Միհրան կեդրոնական վարչութեան ամէնէն երկար անդամն էր, նախ 1983-1999՝ 16 տարիներու եւ ապա 2007-2014՝ 6.5 տարիներու, այսինքն՝ ընդամէնը 23.5 տարիներու ծառայութեամբ: 50 տարուան Հ.Մ.Ը.Մ-ական պատասխանատուի իր կեանքին ընթացքին, միութիւնը յուզող առանցքային որոշումներուն մէջ իր ունեցած ներդրումը եղաւ եզակի: Լայնախոհ էր եւ յարաբերական կապերու կողմնակից: Լիբանանի



մէջ, իր քրոջը՝ Արաքսին հետ առաջիններէն էր, որ պատեանէն դուրս ելաւ եւ Հ.Մ.Ը.Մ-ի Լիբանանի սկառուտական ֆետերասիոնին ներկայացուցիչը դարձաւ: Եղբ. Միհրան մեծ ազդեցութիւն ունեցաւ միութեան վերջին տասնամեակներու պատմութեան վրայ: Հայաստանի անկախ պետականութեան արժէքին հաւատաւոր գիտակիցն էր ան եւ, այդ օրերու այլ դեկավարներու հետ, անկախ Հայաստանի մէջ Հ.Մ.Ը.Մ-ի հիմնադրութեան դերակատարներէն մէկը: Իրողութիւն է, որ Համաշխարհային Սկառուտական Շարժումի Բիւրոյի ընդհանուր քարտուղար Ժագ Մորէսին հետ իր տեսակցութիւնները ճամբայ բացին, որպէսզի Համաշխարհային Սկառուտական Շարժումին մօտ հայ

սկառուտութիւնը ներկայացնելու իրաւունքը «Հայ Արիներ»էն (Գուրգէն Մեծատուրեանի ազդեցութենէն) փոխանցուի Հայաստանի ազգային սկառուտութեան: Այս մէկը, անշուշտ, առիթը ընծայեց որ Հայաստանի Հ.Մ.Ը.Մ-ը դառնայ Հայաստանի Ազգային Սկառուտական Կազմակերպութիւն (Հ.Ա.Ս.Կ.):

Իբրեւ Հ.Մ.Ը.Մ-ական, եղբ. Միհրան դեկավարութեան դիրքերու հասած էր սկառուտական շարքերէն, բայց ան մտքով ու գործով ամբողջական միութենական էր: Նոյն ձեւով պատասխանատու կը զգար թէ՛ մարզական, թէ՛ սկառուտական եւ թէ՛ երիտասարդական կամ կազմակերպական բնոյթի հարցերով: Համա-Հ.Մ.Ը.Մ-ական բանակումները եւ



1992. Յ.Յ.Դ. Ընդհանուր ժողովի կարգ մը մասնակիցներու հետ Փարիզ: Աջէն ձախ՝ Յրաչ Տասնապետեան, Երուանդ Սոնոֆարեան, Միհրան Շիմշիրեան, Վահան Յովհաննէսեան: Ետեւի կարգը կ'երեւին Շահեմ Սեդրեան եւ Երուանդ Փամպուրեան:

մարգախաղերը Սփիւռքէն Հայաստան փոխադրելու որոշումին մէջ իր դերը հական էր: Հ.Մ.Ը.Մ-ի իրերայաջորդ Կեղրոնական Վարչութիւններու ատենապետներուն նեցուկն էր ան, ազդու եւ ներգործօն խորհրդատուն: Միութենական առանցքային որոշումներու մէջ իր ունեցած ներդրումով ան հաշտարար եւ շինիչ դեր վերցուց միութիւնը յուզող ներքին եւ արտաքին բազմաթիւ մարտահրաւէրներու կապակցութեամբ: Կեղրոնական Վարչութեան երկար տարիներու գանձապահն էր, ծայրայեղ բժախնդրութեամբ եւ ինքն իրեն հանդէպ ունեցած ահաւոր պահանջկոտութեամբ:

Հ.Մ.Ը.Մ-ի պատմական եւ մշակութային արժէքներուն իր տիրապետումը ամբողջական էր: Սկզբնական տարիներուն վարակիչ լաւատեսութեամբ համակուած դեկավար էր, յառաջադէմ յատկութիւններով օժտուած: Պարագաներու եւ ժամանակի բերմամբ ազգային ու միութենական մարտահրաւէրները զինք զգոյշ դարձուցին: Տարիները սակայն իր նուիրեալ եւ անշահախնդիր նկարագիրին վրայ ազդեցութիւն չունեցան: Զինք լաւ ճանչցողները գիտէին, որ քննադատական թուող իր տեսակէտներուն ետին կը բարախէր զգայուն սիրտ մը՝ տոգորուած գործնական մտայնութեամբ եւ բարեփոխութեան տենչով:

Կաղապարուած գաղափարներու եւ մակերեսային վերլուծումներու չէր հետեւեր: Նորարարութեան եւ քննական մօտեցումներու ջատագովն էր: Եղբ. Միհրան շարունակ հետարքրքուած էր ոչ միայն իր հայկական շրջապատով, այլ՝ համաշխարհային տարբեր զարգացումներով: Իր շրջապատին մէջ եզակի էր նորութիւններու հետ իր հաշտ նկարագրով: Դիմատետրով եւ ընկերային հաղորդակցութեան այլ միջոցներով միշտ կապի մէջ էր: Իր անակնկալ մահէն երկու շաբթ առաջ հետաքրքրուած էր «Ուլթից ափ»ով: Միշտ մնաց նորարարութեան եւ քննական մօտեցումներու ջատագով: 2007 թուականէն սկսեալ արդէն Հ.Մ.Ը.Մ-ի ռազմավարական ծրագրին գորավիզ էր: Կը հարցնէր, կ'ուզէր օգնել:

Մեր վերջին հանդիպումը եղաւ Լոս Անճելըս, Նոյեմբեր 2013-ին, երբ Քալիֆորնիա այցելութեան եկած էր: Տակաւին աչքիս առջեւ է այդ օրը: Կարօտցած էր եւ կարծես փոփոխութեան պէտք ունէր: Ինչպէս հին օրերը, ուրախ միջոցառումով ունեցանք մեր ընկերային զրոյցը եւ ապա՝ միութենական հանդիպումը: Չափազանց խանդավառ էր, որ քանի մը օրէն զաւակը պիտի տեսնէր: Ժողովի ընթացքին իր ներդրումը ունեցաւ: Ինչպէս միշտ, քաջալերական ու հաւասարակշռուած էր: Անշուշտ, Լիբանան վերադարձէն ետք, մեր խօսակցութիւնները ընկերային հաղորդակցութեան միջոցներով շարունակուեցան:

Ծիշդ է, որ Հ.Մ.Ը.Մ-ը վերջին յիսնամեակին ունեցած է քանի մը տասնեակ հզօր դեկավարներ, բայց հազուադէպս եղած են եղբ. Միհրանին նման անշահախնդիր, նուիրեալ անձերը, որոնք երկարաշունչ կերպով ազդեցիկ եւ օգտաշատ պատասխանատուութիւն ստանձնած ըլլան: Ժամանակը աւելի պիտի հաստատէ անոր արժէքը:

Միհրանին նման անշահախնդիր, նուիրեալ անձերը, որոնք երկարաշունչ կերպով ազդեցիկ եւ օգտաշատ պատասխանատուութիւն ստանձնած ըլլան: Ժամանակը աւելի պիտի հաստատէ անոր արժէքը:



ԱՆԿԱՏԱՐ ԺԱՄԱԴՐՈՒԹԻՒՆ ՄԸ

Սեւան Նազարեան/ ՓԱՐԻՉ

Վարժուած էի երբեմն-երբեմն գիր փոխանակելու եղբ. Միհրանին հետ, որուն առանցքը յաճախ Յ.Մ.Ը.Մ.ն էր:

Երբ եղբ. Միհրան գրէր՝ «ո՞ւր ես», ուրեմն վստահօրէն Յ.Մ.Ը.Մ.ի սիրոյն պահանջ մը ունէր:

Այդ շարքին վերջինը, դժբախտաբար, իր հաւատացած գործին՝ Յ.Մ.Ը.Մ.ի պատմութիւնը, անկէ հետք մը ձգելու կարելորութիւնը, անոր շարունակականութիւնը ապահովելու մտահոգութիւնն էր: Իր գաւկին նման սիրած «Մարգիկ»ի յարատեւութիւնն էր: «Մարգիկ»ը, որ այսքան տարիէ ի վեր Սփիւռքի տարածքին, կարելիի սահմաններուն մէջ, միութեան աշխատանքները ներկայացնող, բայց մանաւանդ ազգային դաստիարակութեան, իր խըմ-

բագիրներուն ու անոնց խմբագրականներուն միջոցով գաղափարախօսութիւն փոխանցող օրրանն էր, պէտք է տարածուէր, ճանչցուէր, հասնէր «ուրիշին», այս պարագային ֆրանսահայ գաղութին, իր հայատառ թերթին ճամբով:

Իդձը մաքուր, հիմնաւորումները, ինչպէս միշտ, եղբ. Միհրանին յատուկ յստակութեամբ եւ ճշգրտութեամբ, համոզիչ ու վարակիչ...

Եղբ. Միհրանի Յ.Մ.Ը.Մ.ական աշխարհը որքան սկաւտութեան, նոյնքան մըն ալ հայ գիրին ծառայող հոգին էր... հայութեամբ տրոփող սիրտ մը, ու աւանդ փոխանցող:

Եղբ. Միհրանին ծայնը տակաւին վառ է ականջներուս, ու բոլոր զինք լսողներու ականջներուն

մէջ, երբ անցեալ Ապրիլին, Կիպրոսի մէջ կայացած միջ-դիւանական ժողովին թէ համա-Յ.Մ.Ը.Մ.ական Պատգամաւորական ժողովներուն ԱՄԷՆ ԳՆՈՎ կը պաշտպանէր ՊԱՅԵԼ «Մարգիկ»ը իբրեւ գրաւոր, տպագրուող մամուլ եւ մանաւանդ հայերէն լեզուով, հակառակ փչող հովերուն, թէ անոր ընթերցողներուն պատկերը խրախուսիչ չէ..., որովհետեւ կը հաւատար անոր կարելորութեան ու արժէքին:

Վերջին պարտք մը ունիմ հանդէպ ձեզի, սիրելի եղբ. Միհրան: Կը կատարեմ զայն:

Մինչ անկատար ժամադրութիւնը պարգապէս յետաձգուած է:

ՅԱԲԵՐԺ ԵՐԻՏԱՍԱՐԴ ԵՂԲԱՅՐ ՄԻՀՐԱՆԸ

Վերա Բարսեղեան-Տեր Պողոսեան ՊԵՅՐՈՒԹ

Իր իւրայատուկ բնաւորութեամբ, խիստ բծախնդիր, անհամբեր ու պարտաճանաչ մեր եղբ. Միհրանը, կրկին իրեն յատուկ փութկոտութեամբ, 40 օրեր առաջ հրաժեշտ տուաւ աշխարհէն:

Ու սգաց Հ.Մ.Լ.Մ.ի աշխարհասփիւռ ընտանիքը:

Լիբանանէն Հայաստան, Փարիզ ու Միացեալ Նահանգներ, Գանատա եւ Աւստրալիա, Հարաւային Ամերիկա եւ ամբողջ Եւրոպա Միհրան Շիմշիրեանի Հ.Մ.Լ.Մ.ական երկարատեւ ծառայութեան իբրեւ արգասիք կերտուած բարեկամներուն ու միութենականներուն կոկորդները խեղդուած էին արցունքներով: Անհաւատալի, բայց իրաւ...

Կարելի՞ էր չսպալ մահը եղբ. Միհրանին, որուն յաւերժ երիտասարդ հոգին զինք սիրելի կը դարձնէր բոլորին: Հ.Մ.Լ.Մ.ական երէց եղբայրը, որ ազնուութիւնը ունէր գիտակցելու եւ ընդունելու որեւէ սխալ՝ անակնկալի մատնելով դիմացինը: Համա-Հ.Մ.Լ.Մ.ական բոլոր հաւաքներու փնտռուած եղբայրը, որ Հ.Մ.Լ.Մ.ի մէջ տարիներու իր տիրական ներկայութեան եւ բեղուն աշխատանքներուն բերումով ունէր անհամար բարեկամներու ցանց մը, որուն կը գուրգուրար «Միհրան»ական մօտեցումով:

Եղբ. Միհրանն էր ինք, որուն հետ գործակցիլը, ճամբորդելն ու զրուցելը համագործ էր համալսարանական դասընթացքի մը:

Եղբ. Միհրանն էր ինք, բծախնդիր գանձապահը, որուն հաշուապահական հմտութիւններուն ծանօթ էին բոլորը:

Եղբ. Միհրանն էր ինք, բոլորին սրտին մօտիկ եղբայրը:

Յաճախ կը կրկնէր, որ իր կինը՝ Շաքէն, լուռ գոհաբերութեան լաւագոյն օրինակն էր, որուն լայնասրտութիւնն ու դրական հասկացողութիւնը միութենական իր նուիրումին օրհնութիւնը կը նկատէր: Իսկական օրհնութիւն մը, որ իր լայնասրտութեամբ նոյնիսկ իր ամուսնոյն մահուան սուգը կիսեց իր միութենական հարազատներուն հետ:

Միութենական կնճռոտ հարցերը եղբ. Միհրանին «երկրաչափական» լուծումներուն կը կարօտէին յաճախ: Իր լայնախոհ մօտեցումով, զանազան դժուարութիւններ «կ'անհետանային» իրեն յատուկ ժպիտով: Անժամանակ մեկնեցաւ ան՝ իրագործումներու ցանկը կիսատ ձգելով:

Սիրելի՛ եղբ. Միհրան,

Գրասեղանդ դատարկ է, հեռաձայնս լուռ: Ժողովական աթոռդ անխօս կը հետեւի մեր ցաւին: Տակաւին հաշտուած չենք քու ակամայ բացակայութեանդ: Չծերացած՝ մահացար, ճիշդ փափաքիդ համաձայն: Հրաժեշտ տուիր մտերիմ ընկերոջդ հետ զրուցելու եւ երգելու ժամանակ, կրկին փափաքիդ համաձայն: Անժամանակ մեկնեցար ու մեկնումիդ ցաւը զգալի է ամէնուրեք:

Բացակայութիւնդ խիստ զգալի է, եղբայր Միհրան: Փոթորկոտ կեանքիդ որպէս աւարտ՝ ննջէ խաղաղութեամբ...



ԵՂԲԱՅՐԱԿԱՆ ՅՈՒՇԵՐ

Լեւոն Թաշճեան ԱՅՆՃԱՐ

Քառասուն օրեր առաջ եղբ. Միհրան Շիմշիրեանի անակնկալ մահը ցնցեց ներաշխարհս: Եղբայր Միհրան ինձի համար այն տիտաններէն մէկն էր, որ կը խորհրդանշէր բովանդակ Հ.Մ.Լ.Մ.ը: Մտքիս հորիզոնին վրայ հիմա կ'ուրուազծուի Հ.Մ.Լ.Մ.ի եղբայրական յուշերու

չարք մը, զոր ունեցած եմ եղբայր Միհրան Շիմշիրեանին հետ: 1969 Օգոստոսին, Կիպրոսի մէջ Հ.Մ.Լ.Մ.ի ընդհանուր բանակումին կայացաւ մեր առաջին հանդիպումը: Եղբայր Միհրան Հ.Մ.Լ.Մ.ի Շրջանային խմբապետ էր այդ օրերուն: Ան խոր տպաւորութիւն ձգեց վրաս՝ որպէս եռանդուն ու խանդավառ խմբապետ: Այդ տպաւորութիւնը օրէ օր վերածուեցաւ ականածանքի, երբ տարուէ տարի միշտ միասին եղանք Հ.Մ.Լ.Մ.ի ընտանիքին մէջ: Միասին եղած ենք ռալի բանակումներու, խմբապետական ժողովներու, Շրջանային Ժողով-

ներու, տողանցքներու եւ միութենական այլ հանդիսութիւններու: Ժողովներուն ընթացքին եղբայր Միհրան կը հանդարտեցընէր լարուածութիւնը, իր տպաւորիչ խրատներով, մանաւանդ որ ան կը վայելէր ժողովականներուն յարգանքը: Որպէս իրաւ Հ.Մ.Ը.Մ.ական իր գործունէութեամբ եղբայր Շիմշիրեան կը բարձրացնէր Հ.Մ.Ը.Մ.ը, իրեն համար Հ.Մ.Ը.Մ.ի ընտանիքը ամէն բանէ վեր էր:

Յուլիս-Օգոստոս 2013-ին, համա-Հ.Մ.Ը.Մ.ական Գ-րդ խաղերուն, Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութիւնը որոշած էր խաղերու ջահը ինծի յանձնել՝ որպէս վեթերան մարզիկ, որպէսզի վազքով տանիմ ու նոր սերունդի մարզիկի հետ վառեմ բացման ջահը: Եղբայր Միհրան Շիմշիրեան, որպէս Կեդրոնական վարչութեան անդամ, ջահը էրեբունի բերդին դիմաց յանձնեց ինծի ու ըսաւ. «Այս բերդին մէջ Ուրարտուի թագաւորին ջահը միշտ անմար եղած է, նոյնպէս Հ.Մ.Ը.Մ.ի ջահը յաւիտեան անմար է»: Երբ Միհրան Շիմշիրեան իմացաւ, որ ես որպէս աթլետի մարզիկ պիտի մասնակցիմ Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Մ.Կ.ի անունով, ըսաւ. «Եղբայր Լեւոն, Հ.Մ.Ը.Մ.ի ընտանիքը մեծ է, Հայաստանը Հ.Մ.Ը.Մ.ի հայրենիքն է»:

Այդ օրերուն, երբ Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Մ.Կ.ի ակումբին մէջ հաւաքուած էինք, եղբայր Միհրան գոհունակ ու հպարտ ժպիտով ըսաւ. «Մենք տարիներով մեր սկաուտական գլխարկին վրայ նշանաբան ունինք Արարատը: Իսկ հիմա մեր հայրենիքի մէջ ունինք Հ.Մ.Ը.Մ.ի ակումբները եւ Հ.Մ.Ը.Մ.ի դրօշը կը ծածանի հայրենի հողին վրայ»:

Համա-Հ.Մ.Ը.Մ.ական Գ-րդ խաղերու ատեն աթլետի մրցումներու ընթացքին երբ կը քալէի, կ'երագէի, որ եղբայր Միհրան ինծի յանձնէ յաղթանակի մետալս: Իսկապէս եղբայր Միհրանի ձեռամբ եղաւ իմ մետալատուելութիւնս: Համա-Հ.Մ.Ը.Մ.ական Գ-րդ խաղերու աւարտին միասնաբար նոյն օդանաւով վերադարձանք Լիբանան: Լիբանանի օդակայանին մէջ զիրար ողջունեցինք՝ կրկին հանդիպելու յոյսով, որ դժբախտաբար չիրականացաւ: Աւա՛ղ այդ եղաւ մեր վերջին հանդիպումը:

Եղբայր Միհրան, դուք ինծի համար միշտ եղած էք Հ.Մ.Ը.Մ.ի անգերագանցելի աստղերէն մէկը: Զեզ ճանչցած եմ որպէս մեծ ուսուցիչ, որ ինծի փոխանցած է ազգային ու հայկական ոգի:

Ես հպարտ եմ, որ մտերմացած ու աշխատակցած եմ, ձեզի հետ Հ.Մ.Ը.Մ.ի մեծ ընտանիքին մէջ, ուրախ եմ, որ հայրենի հողին վրայ դուք ինծի յանձնեցիք յաղթանակի մետալս: Հպարտ եմ, որ Հ.Մ.Ը.Մ.ի անմահութեան ջահը դուք ինծի յանձնեցիք ձեր ձեռամբ:

Եղբայր Միհրան Շիմշիրեան, Հ.Մ.Ը.Մ.ական մեծ եղբայր, հանգիստ ու անհոգ ննջէ, մենք պատրաստ ենք շարունակելու ձեր գործը ու միշտ անմար պահելու Հ.Մ.Ը.Մ.ի ջահը՝ ազգային ու մարզական ոգիով:

Հողը թեթեւ գայ վրադ, թանկագին եղբայր:


The Champs Élysées just steps away and the Parc Monceau nearby

HOTEL



PAVILLON MONCEAU
PARIS

Full of charme,
Tastefully decorated 36 rooms
and 6 suites with individual
heating / air conditioning,
direct access telephone line,
internet connection, minibar,
safety box and satellite TV.
Private bathroom with hairdryer.
The suites can accommodate
3 adults or a family
with parents and 2 children.



43 rue Jouffroy d'Abbans 75017 Paris
Tel 331 56 79 25 00 - Fax 331 42 12 99 38

infos@pavillon-monceau.com
www.pavillon-monceau.com

Studio VICKEN 2005 PARIS

ՑԱՒԱԿՑԱԳԻՐՆԵՐ

Խորը վշտով տեղեկացանք Հ.Մ.Ը.Մ-ի Կենտրոնական Վարչութեան վաստակաշատ անդամ պարոն Միհրան Շիմշիրեանի անժամանակ մահուան մասին:

Ազգային հաստատութիւնների եւ կազմակերպութիւնների առջեւ ծառայած մարտահրաւէրներին դիմակայելու նուիրեալ գործչի կերպարը՝ կառույցի գաղափարները ճշգրտորէն տարածելն ու դրանք անշեղօրէն իրագործելը, հիացնում ու յուսադրում, կրթում ու դաստիարակում էր մատող հոգիներ՝ արթնացնելով նրանց մէջ սէր հայրենիքի եւ հայ ժողովրդի հանդէպ:

Միհրան Շիմշիրեանի համեստ, հայրենասէր կերպարը դեռ երկար կը մնայ նրան ճանաչողների յիշողութեան մէջ, եւ իր կեանքի օրինակով ու նուիրեալ կեցուածքով դեռ շատ ու շատ Հ.Մ.Ը.Մ-ականներ կեանքի ու հայրենասիրութեան դասեր կ'առնեն:

Մխիթարուեցանք այն գիտակցութեամբ, որ նրա հոգին տեղ կը գտնի դրախտի յաւերժութեան մէջ:

Մնում է համբերել եւ մխիթարուել նրա թողած բարի համբաւով ու հայրենանուէր գործերով:

Ձեզ, նրա ընտանիքի անդամների, բոլոր հարազատների ու մտերիմների համար դժուարին այս ծանր պահին ընդունէք մեր ցաւակցութիւններն ու զօրակցութիւնը:

ՀՐԱՆՈՅՇ ՅԱԿՈՒԲԱՆ
Հ. Հ. Սիւրուքի նախարար

Հայ Օգնութեան Միութեան Կեդրոնական Վարչութիւնը խոր կսկիծով իմացաւ Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական Վարչութեան անդամ Միհրան Շիմշիրեանի մահուան մասին: Եղբայր Միհրան Շիմշիրեանի վաստակն ու երկարամեայ գործունէութիւնը հայ կեանքէն ներս մեծ դերակատարութիւն ունեցած են երիտասարդութեան դաստիարակութեան մարզէն ներս: Իր կորուստը պիտի զգացուի բոլորիս կողմէ: Պիտի մնանք այն յոյսով, որ իր շունչին տակ մեծցած երիտասարդներէն պիտի գտնուին անոնք որոնք պիտի ըլլան վաղուան ղեկավարներ:

ՀՕՄ-ի Կեդրոնական Վարչութեան անունով մեր ցաւակ-



ցութիւնները կը յայտնենք Հ.Մ.Ը.Մ-ի ընտանիքին, ինչպէս նաեւ հանգուցեալին հարազատներուն, պարագաներուն եւ բոլոր բարեկամներուն:

ՀԱՅ ՕԳՆՈՒԹԵԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ
ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

Խոր ցաւով իմացանք եղբայր Միհրան Շիմշիրեանի անակնկալ մահուան գոյժը: Այսու մեր խորագրաց ցաւակցութիւնները կը յայտնենք Հ.Մ.Ը.Մ-ի մեծ ընտանիքին, հանգուցեալի այրիին, զաւակներուն ու հարազատներուն, այս մեծ կորուստին համար:

Հանգուցեալ Միհրանը մեր երկար տարիներու մօտիկ բարեկամն էր: Ձինք ճանչցած ենք իբրեւ ազնիւ հայրորդի, իր երկարամեայ, ստուար ու

բազմերես ծառայութիւններ մատուցող գործիչի արդար վաստակով: Հ.Մ.Ը.Մ-ը միշտ ալ մնաց հանգուցեալի գուրգուրանքին ու հոգածութեան կեդրոնական միջավայրը, որուն ընծայած ծառայութիւններուն վկան ըլլալու գոհունակութիւնն ու մխիթարանքը ունինք բոլորս:

Քանի մը ամիսներ առաջ, հանգուցեալին Լոս Անճելըս գտնուելուն առիթով, հաճոյքով վայելեցինք անոր այցելութիւնը Ազգային Առաջնորդարանին յարկէն ներս: Անցեալ ամիս, Անթիլիաս մեր ուղեւորութեան ընթացքին, առիթը ունեցանք վերջին անգամ մը եւս տեսակցելու ու միասնաբար այցելելու Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական Վարչութեան գրասենեակը, մտերմօրէն խորհրդածելու ազգն ու հայրենիքը յուզող զանազան հարցերու մասին:

Այս տխուր առիթով, մեր աղօթքներով կը ցաւակցինք Ձեզի, վստահ ենք որ անոր բարի վաստակն ու ազգանուէր ծառայութիւնը օրինակ կ'ըլլան մեր երիտասարդ սերունդներուն:

Թող ամենաբարին Աստուած Միհրանի բարի հոգին ընդունի Երկնային արքայութեան մէջ ու անոր յիշատակը անթառամ մնայ իր ընտանիքին ու Հ.Մ.Ը.Մ-ի կեանքին մէջ:

Աղօթարար՝
ՄՈՒՇԵՂ ԱՐՔ. ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆ
Մ. Նահանգներու Արեւմտեան Թեմի Առաջնորդ

Հայաստանի ազգային սկաուտական շարժում Հ.Մ.Ը.Մ.- Հ.Ա.Ս.Կ.ի Կենտրոնական Վարչութիւնը մեծ ցաւով տեղեկացաւ Հ.Մ.Ը.Մ.ի Կենտրոնական Վարչութեան անդամ, վաստակաշատ Հ.Մ.Ը.Մ.ական եղբայր Միհրան Շիմշիրեանի անակնկալ մահուան գոյժը:

Մեր խորին ցաւակցութիւնն ենք յայտնում եղբայր Միհրան Շիմշիրեանի ընտանիքի բոլոր անդամներին ու մտերիմներին, Հ.Մ.Ը.Մ.ական մեծ ընտանիքի բոլոր անդամներին՝ ծանր կորստի կապակցութեամբ: Այս անդառնալի կորուստը բոլորինս է, եւ այս պահին մենք սգում ենք Ձեզ հետ միասին...

Մխիթարութիւն բոլոր հարազատներին:

Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ի ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

Սրտի խոր կսկիծով իմացանք Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան գանձապահ՝ վաստակաշատ Հ.Մ.Ը.Մ.ական եղբ. Միհրան Շիմշիրեանի անակնկալ մահուան գոյժը:

Այս տխուր առիթով, Հ.Մ.Ը.Մ.ի Արեւմտեան Միացեալ Նահանգներու Շրջանային Վարչութիւնը իր խորագգաց ցաւակցութիւնները կը յայտնէ Ձեզի եւ Հ.Մ.Ը.Մ.ի մեծ ընտանիքին, անփոխարինելի կորուստին համար:

Կը գիտակցինք, թէ որքա՛ն դժուար է Հ.Մ.Ը.Մ.ականի մը մահը, ի մասնաւորի հանգուցալ եղբ. Շիմշիրեանի պէս անդամի մը կորուստը Հ.Մ.Ը.Մ.ի ընտանիքին համար:

Ընդունեցէք մեր անսահման մխիթարութիւններն ու համբերութեան կամքը: Թող ամենակարողն Աստուած հանգուցեալին հոգին լուսաւորէ եւ երկինքի արքայութեան արժանի ընէ:

Հ.Մ.Ը.Մ.ի ԱՐԵՒՄՏԵԱՆ Մ. ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ ՇՐՋԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

Հ.Մ.Ը.Մ.ի Արեւելեան Միացեալ Նահանգներու Շրջանային Վարչութիւնը կու գայ իր խորին ցաւակցութիւնները յայտնելու Կեդրոնական Վարչութեան, կազմի անդամ եղբ. Միհրան Շիմշիրեանի անակնկալ մահուան տխուր առիթով:

Տէրը իր Սուրբ Հոգիով մխիթարէ ձեզ, հանգուցեալին հոգին լուսաւորէ եւ արժանացնէ յաւիտենական կեանքի:

Հ.Մ.Ը.Մ.ի ԱՐԵՒԵԼԵԱՆ Մ. ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ ՇՐՋԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

Սրտի խոր կսկիծով իմացանք մեր շատ սիրելի երէց եղբոր Միհրան Շիմշիրեանի մահուան տխուր գոյժը:

Յանուն Հ.Մ.Ը.Մ.ի Գանատայի Շրջանային Վարչութեան եւ բոլոր մասնաճիւղերուն, կու գանք մեր խորագգաց ցաւակցութիւնները յայտնելու սիրելի եղբոր ընտանիքին, հարազատներուն եւ Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան:

Աստուած թող Ս. Հոգւոյ մխիթարութիւնը պարգեւէ ննջեցեալին բոլոր հարազատներուն եւ երկնային խաղաղութեան մէջ հանգչեցնէ ազնիւ հոգին:

Սիրելի եղբայր, յիշատակդ անթառամ պիտի մնայ իւրաքանչիւր Հ.Մ.Ը.Մ.ականի հոգիին մէջ:

Հ.Մ.Ը.Մ.ի ԳԱՆԱՏԱՅԻ ՇՐՋԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

Հ.Մ.Ը.Մ.ի Աւստրալիոյ Շրջանային Վարչութեան եւ իր 5 մասնաճիւղերու վարչութիւններուն եւ անդամներուն կողմէ մեր խորին ցաւակցութիւնները կը փոխանցենք Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անդամներուն եւ հանգուցեալին պարագաներուն, մեզմէ յաւէտ բաժնուած վաստակաւոր Հ.Մ.Ը.Մ.ական, Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անդամ եղբ. Միհրան Շիմշիրեանի անակնկալ մահուան սուգին առիթով:

Աստուած հոգին լուսաւորէ եւ հողը թեթեւ գայ իր վրայ:

Հ.Մ.Ը.Մ.ի ԱՒՍՏՐԱԼԻՈՅ ՇՐՋԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ



Հ.Մ.Ը.Մ-ի Հարաւային Ամերիկայի Շրջանային Վարչութիւնը, իր մասնաճիւղերով, այսու կու գայ իր խորին ցաւակցութիւնները յայտնելու Ձեզի, Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական Վարչութեան անդամ եղբ. Միհրան Շիմշիրեանի մահուան տխուր առիթով:

Վստահ ենք որ եղբ. Շիմշիրեանի յիշատակը եւ օրինակը միշտ վառ պիտի մնան իր հարազատներուն եւ համայն Հ.Մ.Ը.Մ-ի ընտանիքի անդամներու սրտերուն մէջ, եւ իր պատգամը պիտի շարունակուի սերունդէ սերունդ:

Աստուած հոգին լուսաւորէ եւ մնացողներուն մխիթարանք պարգեւէ:

Հ.Մ.Ը.Մ-ի ՀԱՐԱՒԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՇՐՋԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

Հ.Մ.Ը.Մ-ի Սուրբոյ Շրջանային Վարչութիւնը իր բոլոր մասնաճիւղերով եւ անդամներով ցաւակցութիւն կը յայտնէ Կեդրոնական Վարչութեան անդամ եղբ. Միհրան Շիմշիրեանի մահուան առիթով:

Եղբ. Միհրանի անակնկալ մահը խոր կսկիծով ընդունե-



ցինք, որովհետեւ Հ.Մ.Ը.Մ-ի ընտանիքը կորսնցուց իր հաւատաւոր նուիրեալներէն մէկը:

Յաւակցութիւններ եղբ. Միհրան Շիմշիրեանի ընտանիքին եւ հարազատներուն, ցաւակցութիւն Կեդրոնական Վարչութեան բոլոր եղբայրներուն եւ Հ.Մ.Ը.Մ-ի ընտանիքին:

Խունկ ու աղօթք եղբ. Միհրան Շիմշիրեանի հոգւոյն: Աստուած հոգին լուսաւորէ:

Հողը թեթեւ մեր սիրելի եղբօր շիրիմին:

Հ.Մ.Ը.Մ-ի ՍՈՒՐԻՈՅ ՇՐՋԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

Հ.Մ.Ը.Մ-ի Յունաստանի Շրջանային Վարչութիւնը եւ համայն Հ.Մ.Ը.Մ-ական քոյրերն ու եղբայրները իրենց խորին ցաւակցութիւնը կը յայտնեն շրջանին շատ մօտիկ, վաստակաշատ Հ.Մ.Ը.Մ-ական եւ Կեդրոնական Վարչութեան գանձապահ եղբ. Միհրան Շիմշիրեանի մահուան տխուր առիթով:

Հ.Մ.Ը.Մ-ի ՅՈՒՆԱՍՏԱՆԻ ՇՐՋԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

Հ.Մ.Ը.Մ-«Ֆրանս»ի վարչութիւնն ու անդամները խոր տխրութեամբ իմացան Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական Վարչութեան անդամ եղբ. Միհրան Շիմշիրեանի մահուան գոյժը:

Անհաւատալի ու անակնկալ այս լուրը ցնցեց մեզ բոլորս:

Մեր խորին ցաւակցութիւնները կը յայտնենք Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական Վարչութեան, Հ.Մ.Ը.Մ-ի անդամներուն եւ իր ընտանեկան պարագաներուն:

Հ.Մ.Ը.Մ-«ՖՐԱՆՍ»Ի ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

Սրտի խոր կսկիծով իմացանք վաստակաշատ Հ.Մ.Ը.Մ-ական, Կեդրոնական Վարչութեան երկարամեայ անդամ եղբ. Միհրան Շիմշիրեանի անակնկալ մահը:

Կիպրոսի վարչութիւնը գինք միշտ պիտի յիշէ որպէս Հ.Մ.Ը.Մ-ի հարազատ ոգին արտայայտող դաստիարակ, մեր բոլորին հաւաքական մտածումներուն, ձգտումներուն եւ ապրումներուն խօսնակը, ինչպէս նաեւ մեր երազներուն եւ յոյսերուն ջահակիրը:

Այս մեծ կորուստին դիմաց, մենք որպէս Հ.Մ.Ը.Մ-Հ.Ե.Մ-ի վարչութիւն պիտի չընկրկինք, այլ՝ եղբ. Միհրանի առաքինի մարդու անկատար մնացած երազը իրագործենք:

Մեր խնդրանքն է որ մեր կազմի ցաւակցութիւնները յայտնէք նաեւ իր ընտանիքին եւ հարազատներուն:

Հ.Մ.Ը.Մ-ի ԿԻՊՐՈՍԻ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

Այսու կու գանք Գահիրէի Հ.Մ.Ը.Մ-«Արարատ»ի վարչութեան եւ անդամներուն կողմէ մեր խորին ցաւակցութիւններ



Թէ Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական Վարչութեան: Թող Աստուած հոգին լուսաւորէ եւ բոլորին համբերութիւն տայ:

Հ.Մ.Ը.Մ-ի ՎԻԵՆՆԱՅԻ ՄԵԿՈՒՍԻ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

Սրտի խոր կսկիծով տեղեկացանք եղբ. Միհրան Շիմշիրեանի անժամանակ մահուան տխուր լուրը:

Յանուն Հ.Մ.Ը.Մ-ի Լոնտոնի մեկուսի շրջանի, մեր խորին ցաւակցութիւնները կը յայտնենք եղբ. Շիմշիրեանի ընտանիքին, Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական Վարչութեան եւ բոլոր Հ.Մ.Ը.Մ-ականներուն:

Եղբ. Միհրանի մահը մեծ կորուստ է Հ.Մ.Ը.Մ-ի ընտանիքին:

Վաստակաշտ եղբոր յիշատակը անմահ կը մնայ բոլոր Հ.Մ.Ը.Մ-ականներու սրտերուն մէջ: Աստուած հոգին լուսաւորէ:

Հ.Մ.Ը.Մ-ի ԼՈՆՏՈՆԻ ՄԵԿՈՒՍԻ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

Հ.Մ.Ը.Մ-ի Ալմելոյի մեկուսի վարչութիւնը իր խորագգաց ցաւակցութիւնը կը յայտնէ Կեդրոնական Վարչութեան գանձապահ եղբայր Միհրան Շիմշիրեանի մահուան առիթով: Թող Աստուած հոգին լուսաւորէ:

Հ.Մ.Ը.Մ-ի ԱԼՄԵԼՈՅԻ ՄԵԿՈՒՍԻ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

Սոյն գրութեամբ գալիս ենք մեր անհուն եւ խորագգաց վշտակցութիւնն ու ցաւակցութիւնը յայտնելու Հ.Մ.Ը.Մ-ի Կենտրոնական Վարչութեանը եւ նոյն միութեան ողջ կառույցին, իր կրած ծանր ու անդարմանելի կորստի՝ ազգային-հասարակական բազմափաստակ ու նուիրեալ գործիչ Միհրան Շիմշիրեանի դաւնաղէտ եւ ցաւալի մահուան կապակցութեամբ:

Ամենակալ Բարձրեալից հայցում ենք հանգուցեալի հոգու համար երկնային խաղաղութիւն եւ Հ.Մ.Ը.Մ-ի Կենտրոնական Վարչութեանն ու ողջ կառույցին եւ իր հարազատներին մաղթում՝ Սուրբ Հոգու մխիթարութիւն եւ անսպառ համբերութիւն:

Յիշատակն արդարոց օրհնութեամբ եղիցի:

Հ.Մ.Ս. «ՆԱՅԻՐԻ» ՄԻՈՒԹԻՒՆ ԹԵՆԿԱՆ

րը յայտնելու Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական Վարչութեան երկարամեայ, վաստակաւոր եւ նուիրեալ անդամ եղբայր Միհրան Շիմշիրեանի անակնկալ մահուան տխուր առիթով:

Հ.Մ.Ը.Մ.- «ԱՐԱՐԱՏ»Ի ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

Հ.Մ.Ը.Մ-ի Քուէյթի մեկուսի մասնաճիւղի վարչութիւնը խոր կսկիծով կը գուժէ վաստակաշատ եւ Հ.Մ.Ը.Մ-ի սկզբունքներուն հաւատարիմ եղբ. Միհրան Շիմշիրեանը:

Մեր ցաւակցութիւնները իր ընտանիքին եւ մասնաւորաբար Հ.Մ.Ը.Մ-ի մեծ ընտանիքին:

Աստուած հոգին լուսաւորէ:

Հ.Մ.Ը.Մ-ի ՔՈՒԷՅԹԻ ՄԵԿՈՒՍԻ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

Սրտի խոր վիշտով ստացանք Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական Վարչութեան անդամ եղբ. Միհրան Շիմշիրեանի անակնկալ մահուան լուրը:

Խոր ցաւով կը սգանք ու մեր վշտակցութիւնները կը յայտնենք սիրելի եղբոր ընտանիքին եւ Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական Վարչութեան:

Աստուած հոգին լուսաւորէ ու երկինքի արքայութեան արժանացնէ:

Հ.Մ.Ը.Մ-ի ՊԱՂՏԱՏԻ ՄԵԿՈՒՍԻ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

Ցաւով եւ ափսոսանքով լսեցինք անակնկալ մահը եղբայր Միհրան Շիմշիրեանի:

Ցաւակցութիւն կը յայտնենք թէ՛ իր ազնիւ ընտանիքին եւ

Սրտի խոր կսկիծով ցաւակցութիւն կը յայտնենք Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական Վարչութեան անդամ եղբայրներուն եւ Հ.Մ.Ը.Մ-ի մեծ ընտանիքին: Կորսնցուցինք սքանչելի եւ անփոխարինելի մարդ մը, Հ.Մ.Ը.Մ-ական եղբայր մը: Բոլորս ջերմ յուշերով կը յիշենք եղբայր Միհրանին Նոյեմբերին Մ. Նահանգներ այցելութիւնը եւ իր համեստ կեցուածքները:

Աստուած հոգին լուսաւորէ:

ՎԻԳԷՆ ԴԱԻԹԵԱՆ
Լոս Անճելոս

Մեծ կորուստ եւ ցաւ է բոլորիս համար եղբ. Միհրանի մահը: Եղբ. Վահրամ Դանիէլեանի բաժանման տակաւին չհաշտուած, այս մէկը կու գայ աւելնալու մեր խոր վշտին վրայ:

Աստուած հոգին լուսաւորէ եւ իր բոլոր հարազատներուն, գործակիցներուն եւ Հ.Մ.Ը.Մ-ի մեծ ընտանիքի անդամներուն մխիթարութիւն պարգեւէ:

Կը խնդրենք առ Աստուած, որ եղբայր Միհրանի հարազատներուն մխիթարութիւն պարգեւէ եւ իր հոգին երկինքի արքայութեան արժանացնէ:

ԱՐՄԷՆ ԵՒ ԱՅՏԱ ԿԵՏԻԿԵԱՆՆԵՐ
Թորոնթօ

Խորին ցաւակցութիւններս եղբ. Միհրանի ընտանեկան պարագաներուն:

Աստուած հոգին լուսաւորէ:

ՎԻԳԷՆ ՔՈՐԹԵԱՆ
Սիտնի

Աստուած հոգին լուսաւորէ եւ ուժ տայ մեզի, որպէսզի կարողանանք շարունակել եղբայր Միհրանի գործը եւ նորահաս սերունդներուն փոխանցենք Հ.Մ.Ը.Մ-ի առաքելութիւնը:

ԳԱՐԼՈՍ ՍԷՖԻՐԵԱՆ
Պուէնոս Այրէս

Մեր խորին ցաւակցութիւնները եղբ. Միհրանի ընտանիքին եւ Հ.Մ.Ը.Մ-ին: Եղբօր մահը մեծ կորուստ է Հ.Մ.Ը.Մ-ի համար:

Աստուած հոգին լուսաւորէ:

ՀՐԱԶ ՄԵՍՐՈՊԵԱՆ
Նիւ Ճըրզի

Ցաւակցութիւններս եղբ. Միհրանի հարազատներուն եւ Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական Վարչութեան: Բոլորս կորսնցու-



Այն Սաֆայի բանակումի մասնակցութիւն: Եղբայր Միհրան ծառի տակ նստած, աջէն առաջինը:



1963. Յունաստանի Ճամպորիի մասնակցութիւն: Եղբայր Միհրան դրօշակով:

ցինք հարազատ Հ.Մ.Ը.Մ-ական եղբայր մը: Աստուած հոգին լուսաւորէ եւ հարազատներուն մխիթարութիւն պարգեւէ: Հողը թեթեւ եղբ. Միհրանի շիրիմին:

ԿԱՐՊԻՍ ԹՈՎՄԱՍԵԱՆ
Հալէպ

Եղբայր Միհրանի վաղաժամ մահուան գոյժը ցնցող հարած մըն էր մեր բոլորին: Խոր յուզումով կը մասնակցիմ Հ.Մ.Ը.Մ-ի մեծ ընտանիքի կորուստին եւ Կեդրոնական Վարչութեան սուգին:

Եղբայր Միհրանի հարազատութիւնն ու մտերմութիւնը վայելեցինք բոլորս:

Ան՝ բազմավաստակ տարիներու ծառայութեամբ, անսակարկ ու հաւատաւոր նուիրումով եւ իր համեստ խառնուածքով, իրեն յատուկ վարկ մը ունեցաւ աշխարհացրիւ Հ.Մ.Ը.Մ-ականներու մօտ:

Եղբայր Միհրանի անսպասելի մահուան տխուր այս պահուն ընդունեցէք իմ խորագգաց ցաւակցութիւններս:

Յարգանք իր գործին:

Անգուգական միութենականին յիշատակը միշտ վառ կը մնայ մեր հոգիներուն մէջ

ՎԱՐՈՒՎԱՆ ՍԵՐՈՒԲԵԱՆ
Մոնթրէալ

Յարգարժան Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական Վարչութեան եղբայրներ:

Խոր ցաւով եւ յուզումով լսեցինք վաստակաշատ եղբ. Միհրան Շիմշիրեանի անակնկալ մահը:

Այսօր Հ.Մ.Ը.Մ-ը կը կորսնցնէ ուրիշ հաւատաւոր եղբայր մըն ալ:

Մեր խորին ցաւակցութիւնները իր հարագատներուն եւ համայն Հ.Մ.Ը.Մ-ի ընտանիքին:

Խուճկ ու մոմ իր անթառամ յիշատակին:

ՀՐԱԶ ՏԷՐ ՍԱՐԳԻՍԵԱՆ
Մոնթրէալ

Խոր ցաւով իմացանք եղբ. Միհրան Շիմշիրեանի մահուան տխուր լուրը:

Հ.Մ.Ը.Մ-ի ընտանիքը կորսնցուց իր ազգային դպրոցին մեծագոյն ուսուցիչներէն մէկը:

Աստուած հոգին լուսաւորէ

ԱԲՐԱՀԱՄ ԱՀԱՐՈՆԵԱՆ
Պուէնոս Այրէս

Սրտի խոր կսկիծով իմացանք անակնկալ մահուան գոյժը եղբ. Միհրան Շիմշիրեանին:

Հ.Մ.Ը.Մ-ի մեծ ընտանիքը կը սգայ մահը մեզմէ յաւերժ հեռացած վաստակաւոր երէց եղբոր մը, որ երկար տարիներ անվարան եւ միշտ կանգնած է ծառայութեան պատնէշի վրայ:

Կը խնդրենք մեր խորին վշտակցութիւնները փոխանցել հանգուցեալին ընտանեկան պարագաներուն եւ մեր ցաւակցութիւնները՝ Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական Վարչութեան:

Հողը թեթեւ գայ վրան:

ՍԱՐԳԻՍ ՍՏԵՓԱՆԵԱՆ
Պոսթըն

Խորին ցաւակցութիւններ իմ սիրելի եղբորս՝ Միհրան Շիմշիրեանին մահուան առիթով:

Հ.Մ.Ը.Մ-ի մեծ ընտանիքը կորսնցուց երկար տարիներու



Եղբայր Միհրան Ա. շարք, ձախէն երրորդը:



1970-ականներու սկիզբ. Հ.Մ.Ը.Մ. Պուրճ Համուտի սկաուտական արարողութեան մասնակցութիւն: Եղբայր Միհրանէն աջէն չորրորդը:

հաւատարիմ եւ վաստակաշատ Հ.Մ.Ը.Մ-ական եղբայր մը: Աստուած հոգին լուսաւորէ:

ԳՕԳՕ ՊԱԼԵԱՆ
Լոս Անճելըս

Խոր ցաւով իմացանք եղբայր Միհրան Շիմշիրեանի անակնկալ մահուան գոյժը:

Իբրեւ Հ.Մ.Ը.Մ-ականներ կը ցաւինք, որովհետեւ արժանաւոր եւ վաստակաւոր դեկավար մարմնի անդամ մը կորսնցուց միութեան մեծ ընտանիքը:

Հ.Մ.Ը.Մ-ի եւ ազգային ամուր գաղափարականով տոգորւած եւ ամբողջ կեանք մը նուիրած այդ իտէալներու իրագործման, եղբայր Միհրան այն սակաւաթիւ «երանելիներու խումբէն» է, որոնք իրենց կեանքը իմաստաւորեցին ազգային անսակարկ ծառայութեամբ:

Աշխարհացրիւ մեր կեանքի այսօրուան իրականութեան մէջ, եղբայր Միհրաններու նմանները փոխարինելը դժուար է: Ոմանք այս իրողութիւնը կը վերագրեն ներկայ կեանքի պայմաններուն, իսկ մենք կը վերագրենք այսպիսի եղբայրներուն հոգիներու խորանին մէջ թառած ազգային զօրաւոր «հաւատքին»:

Հաւատք մը, որ հակառակ իրենց դիմագրաւած դժուար պայմաններուն, իրենց նայուածքներու հորիզոնը երբեք չչեղեց եւ մնաց սեւեռաբիր Մասիսին:

Հաւատք մը, որ չպղտորեցաւ օտար ոսպնեակներու կամ պրիսմակներու ընդմէջէն հրամցուած տեղոյն լոյսի շողերուն նման, այլ փայլեցաւ ջերմ եւ լուսաւոր արեգակին նման:

Հօրս հետ Հ.Մ.Ը.Մ-ի երկարամեայ ծառայութեան ընթացքին զարգացած եղբայրական զգացումները պատճառ դարձած էին, որ ծնողքս իրենց խօսակցութեան մէջ եղբայր Միհրանին ակնարկէին «մեր Միհրան»ով:

«Մեր»ը, իր մարդկային մօտիկութեան իմաստէն անդին, կը նշանակէր ազգային մարդ, գիտակից մարդ եւ նման արժանիքներու պատճառով՝ յարգանքի արժանի մարդ:

Հ.Մ.Ը.Մ-ական քոյրեր եւ եղբայրներ, սիրելի Շիմշիրեան ընտանիք, կը բաժնենք ձեր ցաւը, Աստուած հոգին լուսաւորէ:

Եղբայր Միհրան՝ Աստուած հետդ ըլլայ: Չմոռնաս եղբայրական մեր ջերմ ողջագուրումները փոխանցել դրախտի մեր Հ.Մ.Ը.Մ-ական եղբայրներուն:

ՎԱԶԳԷՆ ԱՐՁՈՒՄԱՆԵԱՆ
Սան Հոգէ

Եղբայր Միհրան Շիմշիրեանի մահուան առիթով Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական Վարչութեան եւ իր հարազատներուն կը փոխանցեմ խորագգաց ցաւակցութիւններս: Լրիւ անակնկալ էր այս բօթը: Փոքր տարիքէս կը ճանչնայի զինք եւ զիս տպաւորած էր որպէս ազնիւ մարդ, նուիրեալ ազգային եւ անխոնջ գործող Հ.Մ.Ը.Մ-ական:

Աստուած լուսաւորէ իր հոգին եւ կեանքը բաշխէ իր սիրելիներուն:

ՅԱԿՈԲ ՏԷՐ ԽԱԶԱՏՈՒՐԵԱՆ
Մոնթրէալ

Խոր կսկիծով իմացանք Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական Վարչութեան գանձապահ եղբ. Միհրան Շիմշիրեանի անակնկալ մահուան գոյժը, որ կայծակնահարեց մեզ՝ իր անսպասելիութեամբ:

Իսկապէս բառերը կը պակսին ու կը տեղումնին, երբ կը փորձենք գանոնք օգտագործել որպէս սպեղանի ձեր սրտաբեկ սիրտերուն: Մխիթարիչ բառերն անգամ կը կորսնցնեն իրենց իմաստն ու ազդեցութիւնը նմանօրինակ անդամանելի կորուստի մը առջեւ:

Այս տխուր առիթով մեր խորագգաց ցաւակցութիւնները

կը յայտնենք հանգուցեալին հարազատներուն եւ Հ.Մ.Ը.Մ-ի համայն ընտանիքին:

Կը հայցենք առ բարձրեալն Աստուած, որ ինք ամօքէ ձեր անդամանելի վիշտը եւ ձեզի տայ անչափ համբերութիւն: Թող անոր շիրիմին ծաղիկները չթոշնին ու յիշատակն ալ մնայ անթառամ:

Հանգիստ իր աճիւնին, իսկ հոգին արժանանայ երկնային գահին:

Խուճկ ու աղօթք անոր հոգիին ու համբերութիւն ձեզի:

**Վշտակից եղբայրներ՝
ՅԱԿՈԲ ԵՒ ՅԱՐՈՒԹ ՊԵՏԻՐԵԱՆՆԵՐ**
Քուէյթ

Սրտի խոր վիշտով ու կսկիծով իմացանք մեր սիրելի եղբ. Միհրան Շիմշիրեանին մահը:

Խոր ցաւով կը սգանք ու մեր վշտակցութիւնները կը յայտնենք սիրելի եղբոր ընտանիքին, հարազատներուն, Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական Վարչութեան եւ Հ.Մ.Ը.Մ-ի մեծ ընտանիքին:

Հողը թեթեւ ըլլայ անոր աճիւններուն վրայ:

Սիրելի՛ եղբ. Միհրան,

Յիշատակդ անթառամ պիտի մնայ իւրաքանչիւր Հ.Մ.Ը.Մ-ականի հոգիին մէջ:

ԳԷՈՐԳ ՄԱՆԿԷԼԵԱՆ
Մոնթրէալ

Ամենախոր մորմոքիչ ցաւով իմացանք եղբ. Միհրան Շիմշիրեանի վաղահաս, անակնկալ մահուան լուրը: Անդառնալի այս մեծ կորուստին դիմաց յուսաբեկ կանգնած՝ մեր զգացած ցաւակցութիւնները կը փոխանցենք ձեզի, ու ձեր միջոցով, Հ.Մ.Ը.Մ-ի աշխարհատարած մեծ ընտանիքի բոլոր անդամներուն:

Խորագգաց ցաւակցութիւն իր վշտահար ընտանիքի բոլոր անդամներուն, հարազատներուն ու ազգականներուն:

Բիւր յարգանք մեծարժէք վաստակին:

Խուճկ ու աղօթք իր անթառամ յիշատակին:

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԵՒ ԳԵՂԱՆՈՅՇ ՄԱՐՏՈՅԵԱՆՆԵՐ
Սիտնի

Սրտագին ցաւակցութիւններս եղբ. Միհրանի մահուան տխուր առիթով:

Հ.Մ.Ը.Մ-ը կը կորսնցնէ արժէքաւոր հին տղոցմէ մէկը եւս:

Աստուած հոգին լուսաւորէ եւ իր ընտանիքին համբերութիւն տայ:

ՄՈՍԻԿ ԹՕՓՈՒԶԵԱՆ
Մոնթրէալ



Եղբայր Միհրան (ոտքի, ձախէն երրորդը) Յունաստանի միջազգային ճամպորհին:

Անակնկալ եւ խոր ցաւով տեղեկացանք Հ.Մ.Ը.Մ-ի նուիրեալ եւ յարգուած եղբայրներէն Միհրան Շիմշիրեանի մահը:

Եղբ. Միհրանի մահը իսկապէս մեծ կորուստ է:

Խորազգաց ցաւակցութիւններս կը յայտնեմ Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական Վարչութեան, Շիմշիրեան ընտանիքի բոլոր անդամներուն:

Հողը թեթեւ գայ վրադ սիրելի եղբայր:

Վշտակցաբար՝
ԱԼԵՔ ԽԱՉԱՏՐԵԱՆ
Լոնտոն

Սիրելիներ,

Իսկապէս անակնկալ եւ չափազանց ցնցիչ լուր մըն էր մեր սիրելի Միհրանին կորուստը: Ինծի համար անսպասելի էր: Շատ կանուխ հեռացաւ մեզմէ:

Յիշատակները շատ են, Հ.Մ.Ը.Մ-ի իր գործունէութիւնը՝ հսկայական:

Միհրանը յատուկ նշանակութիւն եւ դեր ունի թէ՛ Հ.Մ.Ը.Մ-ին եւ թէ՛ մեր բոլորին համար: Ան ապրեցաւ արժանի վարկով, նուիրումով: Ինքն ալ դարձաւ ինկած հերոս, բայց իր ներկայութիւնը միշտ պիտի ճառագայթէ մեր սրտերուն մէջ: Իր ազգային եւ Հ.Մ.Ը.Մ-ական ձգտումները եւ գործունէութեան արդիւնքը պիտի մնան անթառամ:

Յարգանք իր յիշատակին:

Սրտագին ցաւակցութիւններ ձեր բոլորին:

ՏՈՒՐԻՆ Ն. ՊԱՅՐԱՄԵԱՆ
Գահիրէ

Խոր ցաւով տեղեկացայ Կեդրոնական Վարչութեան երկարամեայ նուիրեալ անդամ եղբայր Միհրան Շիմշիրեանի վաղաժամ շիջման լուրը: Հ.Մ.Ը.Մ-ական վաստակաւոր մը եւս կ'երթայ յաւիտենականութիւն, սուգի մէջ ձգելով իր հարազատները, հաւատաւոր գործակիցներն ու զաղափարի ընկերները:

Խունկ եւ աղօթք յիշատակին: Ցաւակցութիւններս հարազատներուն, Ձեզի եւ Հ.Մ.Ը.Մ-ի մեծ ընտանիքին:

ՍՈՒՐԻՆ Ն. ՊԱՅՐԱՄԵԱՆ
Գահիրէ

Եղբայր Միհրանի ապաժամ մահը մեծ կորուստ է բոլորիս համար: Պարապ մը ստեղծուեցաւ իր բացակայութեամբ մեզի համար, որ անկախ Հ.Մ.Ը.Մ-ի միջոցաւ մեր եղբայրութենէն՝ նաեւ բարեկամական ամուր եւ սերտ կապով միացած էինք իրարու:

Աստուած հոգին լուսաւորէ:

ՍԵՂԱ ԵՒ ԿԱՐՕ ՅՈՎԱԿԻՄԵԱՆՆԵՐ
Աթէնք

Խոր ցաւով տեղեկացանք վաստակաշատ Հ.Մ.Ը.Մ-ական եւ Կեդրոնական Վարչութեան երկարամեայ անդամ ու զանձապահ եղբ. Միհրան Շիմշիրեանի անակնկալ մահը, որ ցնցեց բոլորս: Մեծ կորուստ մըն է Հ.Մ.Ը.Մ-ի մեծ ընտանիքին:

Իմ սրտագին ցաւակցութիւններս կը յայտնեմ Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական Վարչութեան եւ «Մարգիկ»ի խմբագրական կազմին եւ բոլորին կը մաղթեմ համբերութիւն եւ համակերպում եղբոր բաժանման իրականութեան հետ:

Աստուած հոգին լուսաւորէ:

Եղբոր յիշատակը անթառամ պիտի մնայ:

Յարգանքներով եւ եղբայրական բարեւանքով:

ԱՐԱ ՔԷՕՀՆԷԼԵԱՆ
Գահիրէ

Սրտի խոր վիշտով ու կսկիծով իմացանք մեր սիրելի եղբոր, խմբապետին, առաջնորդին, վարչականին, գործընկերոջ մահուան գոյժը:

Խոր ցաւով կը սգանք ու մեր վշտակցութիւնները կը յայտնենք սիրելի եղբայր Միհրան Շիմշիրեանի ընտանիքին, հարազատներուն, Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական Վարչութեան եւ միութեան մեծ ընտանիքին:

Կ'աղօթենք, որ Աստուած իր հոգին լուսաւորէ ու երկնքի արքայութեան արժանացնէ: Աղօթելով կը խնդրենք Բարձրեալէն, որ հողը թեթեւ ըլլայ անոր աճիւններուն վրայ եւ այս տերեւաթափէն ետք կեանք առնեն նոր փիթիթներ՝ դալար պահելու միութեան կեանքի ծառը:

Համբերութիւն, մխիթարութիւն բոլոր հարազատներուն եւ Հ.Մ.Ը.Մ-ի մեծ ընտանիքին:

Սիրելի՛ եղբ. Միհրան, յիշատակդ անթառամ պիտի մնայ իւրաքանչիւր Հ.Մ.Ը.Մ-ականի հոգիին մէջ:

Բարի՛ երթ քեզի:

ՄԱՆՈՒԿ ԵՒ ՔՆԱՐ ՔԷՕՇԿԵՐԵԱՆՆԵՐ
Հալէպ

Խորին ցաւակցութիւններս Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական Վարչութեան՝ միութեան մեծ կորուստին համար: Եղբ. Միհրան մեծ բարեկամ մըն էր: 1990-ի Դիլիջանի բանակումին բաւական լայն ժամանակ անցուցած ենք միասին:

Աստուած հոգին լուսաւորէ եւ հարազատները մխիթարէ:

ԱՐԹՈՒՇ ԱՂԱՄԱԼԵԱՆ
Սիտնի

Մեր սրտագին ցաւակցութիւնները Եղբ. Միհրանի անակընկալ մահուան առիթով:

ՎԱՀԷ ԹԱՆԱՇԵԱՆ
Պոսթըն

Մեր անկեղծ եւ խորին ցաւակցութիւնները Եղբ. Միհրանի մահուան տխուր առիթով:

ՍԱՄՈՒԷԼ ՆԱՀԱՊԵՏԵԱՆ
Վիեննա

Խորին ցաւակցութիւններս Հ.Մ.Ը.Մ-ի մեծ ընտանիքին, Կեդրոնական Վարչութեան բոլոր եղբայրներուն, «Մարգիկ»-ի խմբագրութեան եւ վարչութեան: Կորուստը մեծ է: Եղբայր Միհրանին պիտի կարօտնանք եւ երբեք պիտի չմոռնանք:

Աստուած հոգին լուսաւորէ:

ՍԵՂԱ ՊԷՇԼԵԱՆ
Լոս Անճելոս

Այսօր, ամբողջ օրը, սիրելի եղբայր Միհրան, վայրկեան մը անգամ չկարողացայ խճողուած գլուխէս մտահան ընել քեզ: Ամբողջ օրը աչքիս առջեւն էիր, պահ մը համա Հ.Մ.Ը.Մ-ական խաղերու բացման, պահ մը ժողովի թոհուբոհին, պահ մը մարզադաշտը, պահ մը համեստ սեղանին, որուն շուրջ կատարուած բոլուն վէճերը ամբողջ կեանքդ ազգին ու միութեան նուիրելու պատգամները կը ցոլացնէին:

Սիրելի՛ եղբայր Միհրան, հակառակ արեւէն խանձուած դիմագիծիդ եւ ընդհանրապէս չարքաշ շարժումներդ, քու խօսքդ անոյշ էր, վէճդ հրապուրիչ, բայց մանաւանդ ձայնդ, դիւթի՛չ ձայնդ, զոր վայելելու առիթը ինծի տրուած է երկու անգամ: Այս պահուն, վստահ այն իրողութեան, որ հոգիդ անպայման պիտի իջեւանէ երկինք դրախտավայր, քեզի կ'ուզեմ յուշել «Հայաստան երկիր դրախտավայր»ը, զոր այնքա՛ն երգած ու երագած ես:

ՍԵՐՈՒ ՍԱՀԱԿԵԱՆ
Երուսաղէմ



Սկաուտական միջազգային ֆետերասիոնի ընդհանուր քարտուղար Ժագ Մորեոնի Պէյրուս այցելութեան ընթացքին: Հանդիպումին կը մասնակցին եղբ. Միհրան Շիմշիրեան (Լիբանանի սկաուտական ֆետերասիոնի գանձապահ), Ֆաուզի Ֆրդալի (արաբական աշխարհի սկաուտական գրասենեակի ընդհանուր քարտուղար) եւ Ժագ Մորեոն (աջին՝ ակնոցով):

Հ.Մ.Ը.Մ. ԱԶԳԱՅԻՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆՆ ՈՒ ԳԻՏԱԿՑՈՒԹԻՒՆԸ ԶԱՐԳԱՑՆՈՂ ՄԱՐՄՆԱԿՐԹԱՆՔԻ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆՆ Է

(ԵՂԲ. ՀՐԱԶ ՏԷՐ ՍԱՐԳԻՍԵԱՆԻ ՊԱՏԳԱՄԸ, ԱՐՏԱՍԱՆՈՒԱԾ՝
Հ.Մ.Ը.Մ.Ի 95-ԱՄԵԱԿԻ ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹԵԱՆ, ՄՈՆԹԻԱԼԻ ՄԷԶ)

Համախմբուած ենք տօնակատարելու Հ.Մ.Ը.Մ.ի 95-ամեակը: Զեր ներկայութիւնը արդէն ապացոյցն է այս հօր կազմակերպութեան հանդէպ ձեր ունեցած սիրոյն, յարգանքին եւ հաւատարմութեան: Այն կազմակերպութեան, որ անցնող 95 տարիներուն սատարած է ազգապահպանման եւ հայապահպանման նուիրական գործին:



Եազմածեան կ'առաքէր Հայրենիք՝ դաստիարակելու համար Ալեքսանդրապոլի եւ Կարսի հին զօրանոցներուն մէջ պատսպարուած աւելի քան 25 հազար որբեր: Որբեր, որոնք հետագային, 1920-ի հայ-թրքական պատերազմի օրերուն, Հ.Մ.Ը.Մ.ական խմբապետ Վահան Զերազի առաջնորդութեամբ, մասնակցութիւն բերին գինուորական աշխատանքներու, որպէս սուրհանդակ, որպէս մատակարար եւ խրամափոր զօրախումբ:

Հ.Մ.Ը.Մ.ի չորս տառերուն մէջ խտացուած է հայ մարդուն պատկանելիութիւնն ու հաւատարմութիւնը իր ազգին ու եկեղեցիին, մարմնակրթանքը որպէս միջոց ունենալով կազմաւորելու համար պատանին ու երիտասարդը՝ առանց սեռի եւ դաւանանքի խտրութեան, մատղաշ տղոցմէ պատրաստելու Ֆիզիքական, իմացական եւ բարոյական արժանիքներով յանձնառու միութենականներ, օրինակելի ազգայիններ եւ տիպար քաղաքացիներ:

Դժբախտաբար, երկուքուկէս տարի տեւեց Հայաստանի անկախութիւնը, որուն տապալումով Հ.Մ.Ը.Մ.ի հայրենանրէր գործունէութիւնն ալ խափանուեցաւ եւ Վահան Զերազ նահատակուեցաւ իր պաշտած Հայրենիքի ծառայութեան ճամբուն վրայ:

Հ.Մ.Ը.Մ.ի 95-ամեակի հրապարակային տօնախմբութեան այս հանդիսաւոր պահուն, ողջոյնի, գնահատանքի եւ երախտագիտութեան մեր խօսքերուն հետ պարտինք անդրադառնալ միութեան փառահեղ անցեալին եւ դէպի ապագայ մեր երթին դիմաց ցցուած մարտահրաւէրներուն:

Հայաստանէն դուրս, Պոլսոյ մէջ հիմնուած Հ.Մ.Ը.Մ.ը հազիւ չորս տարուան կեանք մը ունեցաւ: Այդ միջոցին ան աւելի զբաղեցաւ Հայրենիքի կարիքներով, հայ որբերու բարոյական եւ Ֆիզիքական դաստիարակութեան աշխատանքով՝ քան մարզական գործունէութեամբ: Հ.Մ.Ը.Մ. ամէն օր ու ամէն տեղ գործեց ազատ Հայրենիքի տեսլականով: Տարիներ անցան, եւ Հայաստանի անկախութեամբ, Հայրենիքին ծառայելու վախճանական նպատակը իրագործուեցաւ եւ Հ.Մ.Ը.Մ.ը վերընձիւղուեցաւ մայր Հայրենիքի մէջ եւ սկսաւ գործել Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ. անունով: Այսօր Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ. անդամ է համաշխարհային սկաուտական շարժումին: Նահատակ եղբայր Վարդան Բախչեանի եւ ընկերներուն նախաձեռնութեամբ, 70 տարի խափանուած միութենական գործը վերստին կը ծաղկի ու կը ծաւալի:

Մեր ազգային պատմութեան մէջ, Հ.Մ.Ը.Մ.ը իր իւրայատուկ տեղը ունի 95 տարուան իր գործունէութեամբ եւ նրա ճանաչմանով:

Ազգերու կեանքին մէջ հազուադէպ են այն միութիւնները, որոնք 95 տարի պահած ըլլան իրենց աշխատելաձեւը եւ հիմնական սկզբունքները: Յատկապէս արդի ժամանակներուն, երբ այդ միութիւններուն մեծամասնութիւնը մարմնամարզական եւ ոչ մարմնակրթական արհեստավարժ կազմակերպութիւններ են, վճարովի պաշտօնէութեամբ:

Սարդարապատի, Բաշ Ապարանի եւ Ղարաքիլիսայի հերոսական ճակատամարտներով, 28 Մայիս 1918-ին ծնունդ առաւ ազատ ու անկախ Հայաստանի Հանրապետութիւնը, իսկ նոյն տարուան Նոյեմբեր 16-ին, մօտ 6 ամիս ետք, շնորհիւ Քրիստեաններու, Յակոբեաններու, Հինդլեաններու եւ խումբ մը տեսլապաշտ հաւատաւորներու, Պոլսոյ մէջ կեանքի կոչուեցաւ Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութիւնը:

Արդարեւ, հազիւ վեցամսեայ Հ.Մ.Ը.Մ.ը Առաջին Հանրապետութեան օրերուն, ընդառաջելով լուսաւորութեան նախարար Նիկոլ Աղբալեանի կոչին, իր խմբապետներէն երեք նուիրեալներ՝ Վահան Զերազ, Տիգրան Խոյեան եւ Օննիկ

Այս խելահեղ արհեստավարժութեան եւ նիւթապաշտութեան պայմաններուն մէջ, 95 տարի գոյատեւել եւ յարատեւել առանց շեղելու հիմնադիրներու գաղափարներէն եւ սկզբունքներէն, արդիւնք է միութեան մը անդամներուն խոր համոզումին եւ հաւատարմութեան:

Որքա՛ն պատիւի եւ յարգանքի արժանի է Հ.Մ.Լ.Մ.ը համաշխարհային գետնի վրայ, յաչս օտար մարմնամարզական կառոյցներուն, իր 104 մասնաճիւղերով եւ աւելի քան 25 հազար անդամներով: Արդարեւ, ան միակն է որ նոյն յարկին տակ կը համախմբէ մարմնակրթանքն ու սկաուտութիւնը եւ իր երկսեռ բաժիններով հայ պատանին ու երիտասարդը կ'առաջնորդէ դէպի մարդկայինը, լաւագոյնը, բարին, վսեմը եւ հայ ազգի նուիրական արժէքներու իրագործումը:

Ամբողջ 95 տարի Եռագոյնին եւ Աւետարանին առջեւ այս միութիւնը եղաւ Աստուծոյ հաւատարիմ, երդուեց Հայրենիքին ծառայել եւ Եռագոյնով հպարտօրէն տողանցեց Գէորգ Կառվարենցի հեղինակած եւ Բարսեղ Կանաչեանի դաշնաւորած «Յառաջ նահատակ» քայլերգով, Պետրոս Ատրուների յղացած «Բարձրացի՛ր-բարձրացուր» նշանաբանին ներքեւ:

Մարդոց կեանքին մէջ 95 տարիքը կը վերագրուի ծերութեան, ուր հետզհետէ ամէն ինչ կը սառի եւ ստեղծագործութիւնն ալ կը դադրի, բայց այդպէս չէ Հ.Մ.Լ.Մ.ին համար, որ հակառակ իր 95-ամեայ անցեալին, կը մնայ երիտասարդ՝ «երիտասարդին հետ, երիտասարդին համար» եւ կոչուած է այդպէս ալ մնալու իր նոյն խանդով, միշտ յառաջդիմելու եւ ստեղծագործելու հաւատքով:

Մեծանուն հրապարակագիր Մինաս Թէօօլեան իր յուշերուն մէջ կ'ըսէ. «Ամէն մէկ Հ.Մ.Լ.Մ.ականի մէջ պատմութիւնը կայ հայոց ժողովուրդին, որովհետեւ պատմութիւնը անցեալ մը չէ միայն, այլ ներկայ մը ու մանաւանդ՝ ապագայ»:

Ներկայի եւ ապագայի ծրագիրներուն հետ, սակայն, կարելի չէ մոռնալ անցեալը, ուր որոշ մանրամասնութիւններ օրուան պայմաններուն հետ փոփոխութեան կ'ենթարկուին, սակայն հիմնական մարտահրաւէրները կը մնան անփոփոխ:

Թող 95-ամեակը յուշարարը ըլլայ անցեալը ապագային շողկապելու գործընթացին:

Այսօր, այս սրահէն ներս ներկայ են շարք մը նուիրեալներ, որպէս միութենական խոնարհ անձնաւորութիւններ, կակուղ թաթիկէն մինչեւ ալեհեր Հ.Մ.Լ.Մ.ականներ, որոնք Եռագոյնի դրօշի առաջնորդութեամբ եւ «Բարձրացի՛ր-բարձրացուր» նշանաբանի ոգիով, Հ.Մ.Լ.Մ.ը տարին բանակումէ բանակում, մարզահանդէսէ մարզահանդէս եւ ազգային տօնախմբման եւ ոգեկոչման ձեռնարկներու:

Հոս պարտք կը զգամ յիշելու, որ

Հ.Մ.Լ.Մ.ի Գանատայի շրջանը սկիզբէն մինչեւ օրս իր ամբողջական ներդրումն ու զօրակցութիւնը բերած է Հ.Մ.Լ.Մ.ի ընդհանուր վերելքին, վարչական, սկաուտական եւ մարզական բնագաւառներէն ներս:

Իրերայաջորդ Կեդրոնական Վարչութիւններու անդամները, յանձինս ողբացեալ եղբայր Դանիէլ Դանիէլեանի, եղբայրներ Վարուժան Սերոբեանի, Հրաչ Տէր Սարգիսեանի եւ Արմէն Կէտիկեանի, իրենց անվերապահ ներդրումն ու աջակցութիւնը ի սպաս դրած են կառոյցի իրագործումներուն եւ վերելքին:

Նաեւ, Գանատայի Շրջանային եւ մասնաճիւղերու իրերայաջորդ վարչութիւնները, առանց ընկրկելու, հետեւողական կերպով աշխատեցան եւ մասնակցեցան Համա-Հ.Մ.Լ.Մ.ական մարզական եւ սկաուտական բոլոր ձեռնարկներու ի խնդիր եւ իրենց կազմակերպչական կարողութիւնն ու փորձառութիւնը ի սպաս դրին այդ ձեռնարկներու յաջողութեան:

Իսկ Գանատայի շրջանի երիցագոյն եւ մեծագոյն մասնաճիւղը՝ Մոնթրէալի Հ.Մ.Լ.Մ.-«Կամք»ը, իր 56 տարուան պատուաբեր գործունէութեամբ, ազգային գիտակցութեամբ եւ կարգապահ շարքերով, սատարած է մեր պատանիներու եւ երիտասարդներու սկաուտական եւ մարզական դաստիարակութեան:

Մոնթրէալի սկաուտական դեկավարութիւնը՝ «Scouts de Montreal» բազմիցս գնահատանքով արտայայտուած է Հ.Մ.Լ.Մ.-«Կամք»ի սկաուտական պատասխանատուներուն եւ խմբապետներուն հանրային կեանքին մէջ ունեցած որակեալ աշխատանքին համար:

Իր կարգին, Հ.Մ.Լ.Մ.ի Լաւալի նորակազմ մասնաճիւղը սկսած է ծաւալիլ իր գործունէութեամբ եւ լծուած է լուրջ աշխատանքի, առաջին հերթին իր հովանիին տակ համախմբելու համար սերունդ մը, որ տարիներէ ի վեր մարզական օտարակումներու մաս կը կազմէ: Յառաջիկայ տարիներուն փաստօրէն պիտի տեսնենք խիստ կարեւորութիւնը այս գործունէութեան:

Սիրելի՛ եղբայրներ եւ քոյրեր, շարունակեցէք այս նուիրական գործը՝ ի շահ մեր սերունդներու դաստիարակութեան:

Բոլորին վարձքը կատար:

Սիրելի՛ ներկաներ, ինչպէս գիտէք, Հ.Մ.Լ.Մ.ը միշտ պատնէշի վրայ եղած է իր մարզական եւ սկաուտական նուաճումներով: Հոս կ'ուզեմ անդրադառնալ յատկանշական շարք մը նուաճումներու, միջազգային մակարդակի վրայ, Սփիւռքի Հ.Մ.Լ.Մ.ականներու կողմէ, որոնք պատուաբեր արդիւնքներ արձանագրած են, հպարտօրէն ներկայացնելով Հ.Մ.Լ.Մ.ը իրենց ծնած ու ապրած երկիրներուն մէջ:-

Ի՞նչպէս կ'ուզենք տեսնել մեր միութիւնը 21-րդ դարուն:
- Ի՞նչպէս ներգրաւել մեր պատանիներն ու երիտասարդները եւ իրագեկ դարձնել զանոնք մեր միութեան կառոյցին եւ անոր իրագործումներուն:
- Ի՞նչպէս բարելաւել, յառաջդիմել եւ ձգտիլ գերազանցման, օրուան պայմանները նկատի ունենալով:
Ահաւասի՛կ հարցումներ, որոնց պատասխանները անպայման մեզի նոր մարտահրաւիրներու առջեւ կը դնեն:

- Հ.Մ.Լ.Մ-ի Լիբանանի փինկ-փոնկի աղջկանց խումբը, 1999-էն մինչեւ օրս, չորս անգամ տիրացած է արաբական ակումբներու ախոյեանութեան: Քոյր Դուին Մունջօղլեան արեւմտեան Ասիոյ ախոյեանութեան տիտղոսը ձեռք ձգելով, 2012-ին Լիբանանը ներկայացուցած է Լոնտոնի ողիմպիական խաղերուն:

- Լիբանանէն Հ.Մ.Լ.Մ-ական վեց հեծելանւորներ, 1980-1992, երկիրը ներկայացուցած են միջազգային մրցումներու: Յիշատակութեան արժանի են Վաչէ եւ Հրաչ Մատուրեան եղբայրները:

- Հ.Մ.Լ.Մ-ական քոյր Քնարիկ Մուրատեան, Լիբանանէն, 2002-էն մինչեւ օրս, 4 անգամ խլած է ճատրակի արաբական աշխարհի ախոյեանութեան տիտղոսը եւ 2011-ին հանդիսացած է Ասիոյ ցամաքամասի ախոյեան:

- Հ.Մ.Լ.Մ-ի Սուրիոյ պասքեթպոլի աղջկանց խումբը 2008-ին տիրացած է երկրի փոխ ախոյեանի տիտղոսին եւ արեւմտեան Ասիոյ ակումբներու ախոյեանութեան:

- Արժանթինէն, Հ.Մ.Լ.Մ-ական եղբայր Դաւիթ Նալպանտեան երկար տարիներ փայլած է թենիսի միջազգային մրցաշարքերու ընթացքին:

- Եգիպտոսի Աղեքսանդրիա քաղաքէն եղբայր Պերճ Թոսունեան պասքեթպոլի, Պերճ Տէտէեան եւ Երուանդ Բարմաքսըզեան մէկ քայլ ոստումի մրցումներուն երկիրը բազմիցս ներկայացուցած են միջազգային եւ Միջերկրականեան խաղերու ընթացքին:

- Մոնթրէալի Հ.Մ.Լ.Մ-«Կամք»էն եղբայր Վարուժան Կիրիւնլեան մաս կազմած է Գանատայի պասքեթպոլի ազգային խումբին:

- Հ.Մ.Լ.Մ-ի Արեւմտեան Միացեալ Նահանգներու շրջանը, 2013-ին, Հ.Մ.Լ.Մ-ական հինգ մարզիկներ տրամադրած է Հայաստանի պասքեթպոլի հաւաքականին:

- Հ.Մ.Լ.Մ-Հ.Ա.Ս.Կ գործօն անդամ է Համաշխարհային Սկաուտական Շարժումի եւրօ-ասիական բաժանմունքին:

- Հ.Մ.Լ.Մ-ի Գանատայի շրջանը, 1999-ի Ապրիլին, միաձայնութեամբ ընդունուեցաւ որպէս անդամ Canadian Olympic Committee-ին (COC): Այս անդամակցութիւնը մեծ պատիւ է Հ.Մ.Լ.Մ-ի ընտանիքին համար:

- Համա-Հ.Մ.Լ.Մ-ական 7-րդ բանակումին, 2002-ի ամրան, Հ.Մ.Լ.Մ-ի սկաուտները Եռագոյն դրօշը բարձրացուցին Արագածի գագաթը, ուխտելով օր մըն ալ գայն կոթողել Արարատի կատարը: Ուխտը իրականացաւ երեք անգամ:

- 2008-ին՝ եղբ. Կորիւն Հայրապետեան Սան Ֆրանսիսքոյէն, 2010-ին՝ եղբ. Ռուբէն Նալպանտեան Երուսաղէմէն, իսկ 2011-ին՝ եղբ. Պետիկ Գասպարեան Պուրճ Համուտէն բարձրացան

Մեր պատանիներն ու երիտասարդները մեզմէ կ'ակնկալեն մանկավարժական եւ գիտական արդի մօտեցումներով յստակ եւ հրապուրիչ ծրագիրներ: Մեր պատասխանատու մարդուժը մինչեւ օրս զոհած է իր ընտանիքը, իր անձնական գործը, ժամերն ու հաճոյքները, ի շահ մեր պատանիներու եւ երիտասարդներու դաստիարակութեան:

Մինչեւ ե՞րբ կրնայ շարունակուիլ այս վիճակը, մէկ կողմէ երիտասարդներու անմիջական եւ նորանոր ակնկալութիւնները, իսկ միւս կողմէ մեր պատասխանատուներու զոհողութեան չափանիշը՝ ի դիմաց այսօրուան պայմաններուն:

Արարատ լեռ եւ կոթողեցին Եռագոյնը՝ անոնք Հ.Մ.Լ.Մ-ի դրօշը իրենց ձեռքին երդուեցին հաւատարիմ ըլլալ Աստուծոյ եւ Հայրենիքին:

- Եւ վերջապէս, մեր «Բարձրացիր-բարձրացուր» նշանաբանը: Պետրոս Ատրուների հեղինակած նշանաբանին առջեւ պէտք է խոնարհիլ, իր խորիմաստ թելադրականութեան եւ մարդկային ու բարոյական արժէքներու բանաձեւման համար:

Այս առթիւ պիտի ուզէի բաղդատական մը կատարել Հ.Մ.Լ.Մ-ի նշանաբան «Բարձրացիր-բարձրացուր»ին եւ միջազգային ողիմպիական խաղերու կարգախօսին՝ «Citius-astius-fortius»-ին միջեւ: Արդի ողիմպիականներու հայրը՝ Փրանսացի Փիէր Տը Քուպէրթէն, 1924-ին, ողիմպիականի ընդհանուր ժողովին կը վաւերացնէ իր կարգախօսը, որ կը նշանակէ՝ աւելի արագ (citius), աւելի բարձր (altius) եւ աւելի ուժեղ (fortius): Ողիմպիական կարգախօսը,

որ մինչեւ օրս ի գօրու է, կ'առաջադրէ մարզիկի մը Ֆիզիքական բարելաւումը, թելադրելով ըլլալ աւելի արագ, աւելի բարձր («բարձրացիր»), աւելի ուժեղ: Մէկ խօսքով, ան աւելի կը նպատակադրէ անհատական նուաճում մը:

Մեր նշանաբանը, որ ողիմպիական կարգախօսէն 5 տարի առաջ վաւերացուած է (1919), շատ աւելի ամբողջական է, որովհետեւ «Բարձրացուր»ը մարդկային մեծ առաքելութեան մը արտայայտութիւնն է:

Երբ Հ.Մ.Լ.Մ-ի պատմութիւնը սերտենք, կը տեսնենք որ մեր նշանաբանը Պոլսոյ մէջ այդ տարիներուն լայն ընդունելութիւն գտած է այդ օրուան շարքերուն, ժողովուրդին, ղեկավարութեան եւ միջազգային ղէմքերուն մօտ:

14 Յուլիս 1919-ին, Ֆրանսայի ազգային տօնին առիթով, նաեւ՝ քաղաքական ու զինուորական պաշտօնական գանազան ձեռնարկներու ընթացքին, Հ.Մ.Լ.Մ-ի սկաուտութիւնն ու նուազախումբը, իրենց տողանցքներով մեծ խանդավառութիւն ստեղծած եւ գնահատուած են Փրանսացի բարձրաստիճան անձնաւորութիւններու կողմէ իրենց տարած աշխատանքին եւ նշանաբանին հանդէպ ունեցած հաւատարմութեան համար:

Արդ, այս առթիւ հարց կու տամ, թէ արդե՞ք Altius բառը, որ կը նշանակէ աւելի բարձր, ներշնչուած է մեր «Բարձրացիր» բառէն, եւ եթէ պատասխանը դրական է, այն ատեն սատարած կ'ըլլանք ողիմպիականի կարգախօսին, անոր տալով յաւելեալ բարոյական արժէք մը: Վստահաբար, այս հարցը կը կարօտի աւելի խոր պրպտումներու:

Այս բաղդատականը համարձակեցայ ընել, նախ՝ ձեզի հետ բաժնեկցելու համար տարիներու մտատանջութիւնս այս մասին, եւ նաեւ՝ անգամ մը եւս շեշտելու համար մեր նշա-

նաբանին խորիմաստ արժեքն ու կարեւորութիւնը:

Հ.Մ.Ը.Մ-ի 95 ամեայ գործունէութիւնը լուսարձակի տակ առնելէ ետք, պիտի ուզէի անդրադառնալ նաեւ իր ապագային՝ շարք մը հարցումներով:-

- Ի՞նչպէս կ'ուզենք տեսնել մեր միութիւնը 21-րդ դարուն:

- Ի՞նչպէս ներգրաւել մեր պատանիներն ու երիտասարդները եւ իրագեկ դարձնել զանոնք մեր միութեան կառոյցին եւ անոր իրագործումներուն:

- Ի՞նչպէս բարելաւել, յառաջդիմել եւ ձգտիլ գերազանցման, օրուան պայմանները նկատի ունենալով:

Ահաւասիկ հարցումներ, որոնց պատասխանները անպայման մեզի նոր մարտահրաւէրներու առջեւ կը դնեն: Օրուան գիտական եւ համացանցի նորութիւններուն հետ աշխարհը փոփոխութիւններու ենթարկուած է: Արագ է այսօրուան աշխարհը: Համացանցը եւ skype-ը անմիջական հաղորդակցութեան միջոցներ են, ուր միտքեր կը զարգանան եւ լուծումներ կ'որոնուին: Հ.Մ.Ը.Մ-ը ո՞ւր է այս բոլորին մէջ:

Մեր պատանիներն ու երիտասարդները մեզմէ կ'ակնկալեն մանկավարժական եւ գիտական արդի մօտեցումներով յստակ եւ հրապուրիչ ծրագիրներ: Մեր պատասխանատու մարդուժը մինչեւ օրս գոհած է իր ընտանիքը, իր անձնական գործը, ժամերն ու հաճոյքները, ի շահ մեր պատանիներու եւ երիտասարդներու դաստիարակութեան:

Մինչեւ ե՞րբ կրնայ շարունակուիլ այս վիճակը, մէկ կողմէ երիտասարդներու անմիջական եւ նորանոր ակնկալութիւնները, իսկ միւս կողմէ մեր պատասխանատուներու գոհողութեան չափանիշը՝ ի դիմաց այսօրուան պայմաններուն:

Հ.Մ.Ը.Մ-ի վերջին Պատգամաւորական ժողովը վաւերացուց միութեան յառաջիկայ 10-15 տարիներու զարգացման հեռանկարները ներկայացնող ռազմավարական ծրագիր մը (strategic plan): Յոյսով ենք, որ այս ծրագրին գործադրութիւնը հաւաքական համոզումով եւ աշխատանքով պիտի կարողանայ լուծումներ գտնել 21-րդ դարու մեր մարտահրաւէրներուն: Պէտք է մեր ուժերը կեդրոնացնել հայեցի դաստիարակութեան եւ ազգային առողջ մտածողութեան վրայ: Այս ուղղութեամբ սփիւռքահայ թէ՛ հայրենի մեր կեանքին մէջ տակաւին շատ գործ ունինք ընելիք, սերունդներ ունինք դաստիարակելիք:

Խօսքս պիտի եզրափակեմ ըսելով՝ սիրելի՛ ծնողք, ձեր գաւակները առանց վարանելու վստահեցէք Հ.Մ.Ը.Մ-ին, ուր անոնք պիտի դաստիարակուին բարոյական վսեմ արժեքներով, ըլլալու համար նախ լաւ մարդ՝ իր բոլոր արժանիքներով, ապա հայ իր էութեամբ եւ ապրումներով եւ, վերջապէս, միութենական, «Բարձրացի՛ր-բարձրացուր»ի հաւատքով եւ գործունէութեամբ:

«Յառա՛ջ նահատակ, ցեղի անմահներ» քայլերգի հնչիւններով պիտի երգենք, պիտի տողանցենք, մեզի փոխանցուած ջահը մեր ձեռքին, միասին ուղղուելու դէպի հարիւրամեակ, դէպի լուսաշող ապագայ:

Բի՛ւր յարգանք ու պատիւ Հ.Մ.Ը.Մ-ին եւ անոր շուքին ներքեւ ծառայող կամաւոր բանակին:

Տարեդարձդ բարի՛ սիրելի միութիւն, թող երթդ շարունակուի եւ ըլլաս յաւերժական:

with the complements of

Restaurant Al-Mayass



ԷՕԶԷՊԻՈՅԻ ՀՐԱԺԵՇՏԸ

Գ. Թորոյեան ՊԵՅՐՈՒԹ

Անկասկած, Ֆուլթայոյի պատմութեան մէջ իր անգնահատելի տեղը ունի փորթուղալցի Էօզէպիոն, որ Յունուար 5-ին հրաժեշտ տուաւ իր սիրելիներուն եւ Ֆուլթայոյասէրներուն: 1960-ական թուականներուն անոր աստղը կը փայլէր Ֆուլթայոյի երկնակամարին վրայ, ճիշդ այն օրերուն, երբ Պրագիլի հսկաները՝ Փելէ, Կարինչա իրենց փառքի օրերուն մէջ էին ու երբ Անգլիոյ մէջ Պոպի Չարլթըն հերոսի կը վերածուէր ու գերմանացի երիտասարդ խաղացողներու հոյ մը գերմանական Ֆուլթայոյը կը հաստատէր միջազգային բեմին վրայ: Ահա այսպիսի օրերուն, մոզամպիկցի արմատներով փորթուղալցի Էօզէպիո փորթուղալեան Ֆուլթայոյը կը ծանօթացնէր Ֆուլթայոյասէրներուն: Եւրոպայի «Չեմփիրնգ Լիկ»ի մրցումներուն Պենֆիթայի սրբնթաց յաղթանակներն ու նուաճած տիտղոսը, ապա՝ 1966-ի Մոնտիալին Փորթուղալի ազգային խումբին աննախընթաց յաջողութիւնը փառքի դափնիներ կը հիւսէին Էօզէպիոյի շուրջ:

Էօզէպիո Տա Սիլվա Ֆերէյրա ծնած է 1942 Յունուար 25-ին: Պատանի տարիքին կը միանայ Փորթուղալի Սփորթինկ Մարքէզին: Հազիւ երիտասարդ, 1960-ին, դեռ 18 տարեկան հասակին կը միանայ Փորթուղալի հզօրներէն Պենֆիթայի կազմին եւ կը սկսի թէ՛ անոր եւ թէ՛ Պենֆիթայի փայլուն յաղթանակներուն եւ տիտղոսներուն շրջանը: Էօզէպիո Ֆուլթայոյի ասպարէզի իր փայլուն տարիները կ'անցընէ իր սիրած կազմին հետ: Շուրջ 15 տարի Պենֆիթայի մաս կազմելով ան կը յաջողի խել բազմաթիւ տիտղոսներ: Ան 11 անգամ կը հանդիսանայ Փորթուղալի ախոյեան: 5 անգամ կը շահի Փորթուղալի բաժակը: Երկու անգամ կը շահի «Չեմփիրնգ Լիկ»ը եւ

երեք անգամ ալ կը հասնի աւարտականին եւ կը դառնայ փոխ ախոյեան:

Հարուստ են նաեւ Էօզէպիոյի անձնական տիտղոսները: Ան եօթը անգամ կը դառնայ Փորթուղալի ախոյեանութեան լաւագոյն կոլ-սքորըրը: 1966-ին կ'ընտրուի Եւրոպայի լաւագոյն Ֆուլթայոյիստ, իսկ երեք անգամ կը տիրանայ «Ոսկի կօշիկ»ին՝ 1962-ին, 1966-ին եւ 1968-ին: Ֆուլթայոյիստի ասպարէզի ընթացքին ան կը կատարէ 498 մրցում եւ կը նշանակէ 469 կոլ:

Բնականաբար, նման Ֆուլթայոյիստ մը անմիջապէս պիտի հրաւիրուէր ազգային խումբ: Փուլթուղալի հետ Էօզէպիո եւ խմբակիցները 1966-ի Մոնտիալին կը հասնին կիսաւարտական եւ կը գրաւեն պատուաբեր երրորդ դիրքը: Ցարդ Ֆուլթայոյի աշխարհին անձանօթ Փորթուղալ կը հանդիսանայ այդ Մոնտիալին մեծագոյն անակնկալը, իսկ Էօզէպիո կը դառնայ Մոնտիալին կոլ-սքորըրը՝ նշանակելով 9 կոլ:

1975-ին Պենֆիթայի լքելով ան կը մեկնի Միացեալ Նահանգներ եւ Գանատա, ուր չորս տարի մաս կը կազմէ տարբեր ակումբներու եւ 1979-ին՝ 37 տարեկան հասակին հրաժեշտ կու տայ Ֆուլթայոյիստի իր ասպարէզին:

Էօզէպիո կոլ նշանակելու իր յատկութեան կողքին կը յատկանշուէր նաեւ իր արագութեամբ: Ան 100 մեթր վազած է 11 երկվայրկեանի ընթացքին, ինչ որ պատճառ դարձած է որ Պենֆիթայի մարզիչը զինք միացնէ իր կազմին:

Էօզէպիո մնաց յարգուած Ֆուլթայոյիստ մը: Ան միշտ հետեւեցաւ Փորթուղալի յաջողութիւններուն եւ ձախողութիւններուն: Քրիսթիանօ Ռոնալտոյի մէջ ան տեսաւ իր յաջորդը:

2014 Յունուար 5-ին ան մահացաւ իր տան մէջ՝ սուգի մատնելով իր երկու աղջիկներն ու թոռները: Իր մահուան օրը Ֆուլթայոյի կայսրըրը՝ Պեքընպաուըրը ըսաւ. «Բոլոր ժամանակներու լաւագոյն Ֆուլթայոյիստներէն մէկը հեռացաւ մեզմէ»:



95-ԱՄԵԱԿԻ ՄԵԾԱՇՈՒՔ ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹԵԱՄԲ՝

Հ.Մ.Ը.Մ. ԳԱՆԱՏԱ ՎԵՐԱՆՈՐՈԳԵՑ ԱԶԳԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹԵԱՆ ԻՐ ՈՒԽՏԸ

**Տ. Շահինեան
ՄՈՆԹՐԵԱԼ**

Կիրակի, 9 Փետրուարի երեկոյան ժամը 6-ին, Մոնթրէալի Հայ Կեդրոնի «Ահարոնեան» սրահին մէջ պանծացուեցաւ Հ.Մ.Ը.Մ-ի 95-ամեայ երթը՝ շրջանային եւ տեղական վարչութիւններու միացեալ ճիգերով կազմակերպուած տօնակատարութեան մը ընթացքին: Հ.Մ.Ը.Մ-ի հիմնադրութեան 95-ամեակին առընթեռ նշուեցաւ նաեւ տեղւոյն Հ.Մ.Ը.Մ.-«Կամք» մասնաճիւղի հիմնադրութեան 55-ամեակը, ինչ որ կրկնակիօրէն արժեւորեց այս մեծ միութեան ազգային դերակատարութեան կարեւորութիւնը:

Հանդիսութեան ներկայ եղան Գանատայի Հայոց Թեմի Առաջնորդ Խաժակ Արք. Յակոբեան, Գանատայի մօտ



Հայաստանի Հանրապետութեան հիւպատոս Արամ Յակոբեան, Հ.Յ.Դ. Բիւրոյի անդամ Յակոբ Տէր Խաչատուրեան, Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական Վարչութեան ներկայացուցիչ եղբ. Արմէն Կէտիկեան, Հ.Յ.Դ. Գանատայի Կեդրոնա-

կան եւ տեղական կոմիտէներու, ինչպէս նաեւ՝ ուղեկից միութիւններու, շրջանային եւ տեղական վարչութիւններու ներկայացուցիչներ, Հ.Մ.Ը.Մ-ական վեթերան եւ գործունեայ եղբայրներ ու քոյրեր եւ Հ.Մ.Ը.Մ-ի համակիրներ:

Տօնակատարութիւնը նախագահեցին տէր եւ տիկին Արեգ Մարգարեաններ:

Տօնակատարութիւնը բացուած յայտարարեց Հ.Մ.Ը.Մ.-«Կամք» մասնաճիւղի ատենապետուհի քոյր Սօսի Տալեան: Ապա խօսք առաւ Հ.Մ.Ը.Մ-ի Գանատայի Շրջանային Վարչութեան ատենապետ եղբ. Տիրան Շահինեան: Եղբայրը իր խօսքին սկիզբը ներկաները հրաւիրեց մէկ վայրկեան յտորնկայս լռութեամբ յարգելու մեզմէ յաւէտ բաժնւած Հ.Մ.Ը.Մ-ականներու եւ ի մասնաւորի՝ նախկին Կեդրոնական Վարչութեան անդամ եղբ. Վահրամ Դանիէլեանի յիշատակը: Ապա, ան իր խօսքին մէջ կարեւորութեամբ անդրադարձաւ միութեան 95-րդ եւ մասնաճիւղի 55-րդ տարեդարձերուն, գնահատելով անոնց դե-





Nike's Photos

րակատարութիւնը նորահաս սերունդներու դաստիարակութեան մէջ: Եղբայրը իր խօսքը աւարտեց ըսելով. «Բոլորիս պարտականութիւնն է մեծապէս զօրավիգ կանգնիլ ազգային հպարտութիւն ներշնչող այս միութեան եւ ջանք չխնայել անոր ծաւալումին եւ բարգաւաճումին համար եւ, մանաւանդ, ճակատաբաց հպարտ ըլլալ, որ Հ.Մ.Ը.Մ.ի

նման կազմակերպութեան մը մեծ ընտանիքին մաս կը կազմենք»:
Հ.Մ.Ը.Մ.ին կեդրոնական վարչութեան խօսքը փոխանցեց եղբ. Արմէն Կէտիկեան: Եղբայրը բարձր գնահատեց Հ.Մ.Ը.Մ.ի հարուստ եւ բացառիկ իրագործումներով 95-ամեայ պատմութիւնը՝ գրուածելով սերունդներ կերտելու միութեան առաքելութիւնը:

ՇՆՈՐՀԱՒՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁ

Հայ մարմնակրթական ընդհանուր միութեան Գանատայի Շրջանային Վարչութեան


Գանատայում Հ.Յ. դեսպանութեան եւ անձամբ իմ անունից շնորհաւորում եմ Հ.Մ.Ը.Մ.ի հիմնադրութեան 95-ամեայ տարեդարձի կապակցութեամբ:

Լինելով աշխարհասփիւռ հայութեան կարելոր կազմակերպութիւններից մէկը՝ Հ.Մ.Ը.Մ.ը զուգակցում է սպորտային կրթութիւնը ազգասիրութեան եւ հայրենասիրութեան դաստիարակմամբ: Յիշարժան է Հ.Մ.Ը.Մ.ի դերակատարութիւնը աւելի քան հարիւր տարւան պատմութիւն ունեցող հայ սկաուտութեան կազմակերպման եւ հայ երիտասարդութեան լայն շրջանակներում այն տարածելու գործում:

Մաղթում եմ միութեանը յաջողութեամբ շարունակել հայ երիտասարդութեանը միաւորելու իր ազգապահպան գործունէութիւնը:

Լաւագոյն բարեմաղթանքներով՝

ԱՐՄԵՆ ԵԳԱՆԵԱՆ
Հ. Հանրապետութեան արտակարգ
եւ լիազօր դեսպան Գանատայի մէջ



Ապա, ան աւելցուց. «Թէեւ 95-ամեայ անցեալ ունինք, բայց շատ երիտասարդ ենք եւ կոչուած ենք այդպէս ալ մնալու, որովհետեւ միշտ ապրեցանք նոյն խանդով ու հաւատքով: Այդպէս է նաեւ մեր ներկան, տարբեր չի կրնար ըլլալ նաեւ ապագան: Ահա թէ ինչու, այսօր, մենք նոյն վճռականութեամբ եւ անխախտ հաւատքով կը շարունակենք Հ.Մ.Ը.Մ.ի յաղթական երթը»: Եղբ. Կէտիկեան իր խօսքը եզրափակեց ըսելով. «Կը մաղթեմ որ նոյն թափով եւ կորովով շարունակէք ձեր աշխատանքը, միշտ ի մտի ունենալով Հ.Մ.Ը.Մ.ի նշանաբանը»:





Օրուան պատգամաբերն էր Հ.Մ.-Ը.Մ.ի Կեղրոնական Վարչութեան նախկին անդամ եղբ. Հրաչ Տէր Սարգիսեան: Եղբայրը իր պատգամին մէջ հանգամանորէն անդրադարձաւ այս մեծ միութեան ունեցած նպաստին՝ յետ եղեռնեան որբահաւաքի աշխատանքներէն մինչեւ սփիւռքահայութեան կեանքի կազմակերպում եւ հեռաւոր ավերու մէջ հայու բեկորները հոգեկան ցրտութենէ զերծ պահելու կամքի արտայայտութիւն: Պատգամաբերը ընդգծեց Հ.Մ.-Ը.Մ.ի հիմնադիր սերունդին տեսլականը եւ Հ.Մ.-Ը.Մ.ական քոյր-եղբայրներու պատրաստակամութիւնը՝ նոյն տեսիլքով եւ նոր ժամանակներու ոգիով շարունակելու երթը ո՛չ միայն



ՈՂՁՈՅՆ

ՀԱՅ ՄԱՐՄՆԱԿՐԹԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹԵԱՆ ՀԻՄՆԱԳՐՈՒԹԵԱՆ 95-ԱՄԵԱԿԻՆ ԱՌԻԹՈՎ

Այսօր իսկական հրճուանքով եւ հպարտութեամբ է, որ կ'ողջունենք Հ.Մ.Ը.Մ.ի հիմնադրութեան 95-ամեակը:

Տարեդարձներու այս յիշողութիւնն ու նշումը կը մղէ մեզ խորհելու Հ.Մ.Ը.Մ.ի առաքելութեանը մասին, որ սփիւռքեան դաժան հեռանկարներուն դիմաց մարտահրաւերի դրօշ ու պայքարի ուղեգիծ եղաւ:

Սփիւռքի ցարդ գոյութիւնը՝ մեզ կանխող, ինչպէս եւ մեր ու ապագայ սերունդներուն յարատեւօրէն մղող պայքարին ու խոհուն եւ նուիրեալ աշխատանքին արդիւնքն է եւ պիտի ըլլայ, եւ այս առաւել քան երբեք, մեր վրայ կը դնէ անտեղիտալի պարտաւորութիւնը համայնականօրէն ու համադաշն կերպով, խոհական ծրագրումով նուիրագրուելու հայապահպանման նուիրական առաքելութեան: Այս պայքարին մէջ անտարբերութիւնը վստահաբար կործանարար հետեւանքներ կրնայ ունենալ Սփիւռքի ազգուն գոյութեան վրայ:

Հ.Մ.Ը.Մ.ը իր մասնաձիւղերով եւ առաքելութեամբ սփիւռքեան այս համայնական գոյապայքարին իր երախտարժան ու նուիրական բաժինն է որ կը բերէ մեր գաղութներուն:

Հ.Մ.Ը.Մ.ը իր երիտասարդական շարքերով մեզի ու մեր հողին, ջուրին, պատմութեան եւ իտէալներուն, հոգեկան ապրումներուն եւ հոգեխռով վերացումներուն յիշողութիւնը կենդանի կը պահէ, այլ մանաւանդ հայապահպանումի սրբազան առաքելութիւնն է, որ կ'իրագործէ՝ յատկապէս սփիւռքեան մեր իրականութեան մէջ, մէկ Ազգի եւ Միացեալ ու Ազատ Հայրենիքի երազանքով, մեր յաջորդական սերունդներուն համար յաւերժացնելով հայու ստեղծագործ հոգիին բազմադարեան եւ հարազատ Ազգային ժառանգութիւնը անոր նոր օրերու նոր ծլարձակումներովը:

Շնորհակալութիւն, շնորհակալութիւն եւ բարի երթ:
Ողջ լերուք ի Տէր:

Աղօթարար՝
ԽԱԺԱԿ ԱՐՔ. ՅԱԿՈԲԵԱՆ
Առաջնորդ Գանատայի Հայոց Թեմին





Սփիւռքի, այլեւ՝ Հայաստանի ու Արցախի տարածքին, ուր Հ.Մ.Ը.Մ-ը կը գործէ Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ. անունով (Եղբոր պատգամը տեսնել էջ 20-23):

Տօնակատարութեան ընթացքին Հ.Մ.Ը.Մ-ի «Մառաշուկեան» շքանշանով պարգևատրուեցան չորս անդամներ՝ քոյր Թալին Սերրբեան, եղբայրներ

Պետրոս Հայրապետեան, Արա Էկոյեան եւ Վահէ Թաշճեան, որոնք իրենց երկարամեայ գործունէութեամբ օժանդակած են միութեան եւ օգտակար հանդիսացած են անոր ամրապնդման, զարգացման ու վերելքին:

Ապա, Մոնթէալի Հ.Մ.Ը.Մ.-«Կամք» մասնաճիւղի ատենապետուհի քոյր Սօ-

սի Տայեան օրուան նախագահին՝ Արեգ Մարգարեանին յանձնեց յուշատախտակ մը, առ ի գնահատանք իր նիւթական օժանդակութեան: Ան իր նիւթական եւ բարոյական օժանդակութեամբ մեծապէս նպաստած է եւ կը շարունակէ նպաստել Հ.Մ.Ը.Մ-ի Գանատայի Շրջանային Վարչութեան եւ մասնաճիւղին:

Հանդիսութեան գեղարուեստական յայտագիրին իրենց մասնակցութիւնը բերին Հ.Մ.Ը.Մ.-«Կամք»ի արի-արենոյճները:


Տօնակատարութեան աւարտին, Հ.Մ.Ը.Մ-ի 95-րդ տարեդարձին կարկանդակը հատեցին օրուան նախագահ Արեգ Մարգարեան, Կեդրոնական Վարչութեան ներկայացուցիչ եղբ. Արմէն Կէտիկեան եւ Շրջանային Վարչութեան ատենապետ եղբ. Տիրան Շահինեան:


Հոգեպարար այս պահը Հ.Մ.Ը.Մ-ի ազգային իտէալներով վերանորոգուելու առիթ մը հանդիսացաւ եւ աւարտեցաւ Գառնիկ Քհնյ. Գոյունեանի մաղթանքով, «Պահպանիչ»ով եւ Հ.Մ.Ը.Մ-ի քայլերգ «Յառաջ նահատակ»ի յոտրնկայս խմբերգով:

ARMENIA
for private and group trips
www.saberatours.fr

- Direct Flights
PARIS
YEREVAN
PARIS
- Select your Journey
- Guided Tours for 8 Days or 12 Days

Saberatours Sevan Voyages

WITH THE COLLABORATION OF THE NEW AIRLINE COMPANY  **Armavia**
Արմավիա



				
11, rue des Pyramides 75001 Paris tel 331 42 96 10 10 fax 331 42 96 18 77 saberatours@selectour.com	48, cours de la Liberté 69003 Lyon tel 334 78 60 13 66 fax 334 78 60 92 26 sevan@selectour.com	67, La Canebière 13001 Marseille tel 334 95 09 30 60 fax 334 95 09 30 61 marseille@wasteels.fr	32-38, rue Hanrabedoutian Yerevan tel 374 10 52 55 55 fax 374 10 56 40 30 sabera@arminco.com	



Հ.Մ.Ը.Մ.Ի ԱԹԷՆՔԻ ՄԱՍՆԱԾԻԻՂԻ ՄԿԱՌԻՏԱԿԱՆ ԵՐԿՕՐԵԱՅ ՍԵՄԻՆԱՐԸ

Լոռի Պարագեան ԱԹԷՆՔ

Կազմակերպութեամբ Հ.Մ.Ը.Մ.ի Աթէնքի Շրջանային ճիւղի խմբապետութեան եւ Շրջանային Սկաուտ-Սորհուրդին, Շաբաթ, 24 եւ Կիրակի, 25 Յունուար 2014-ին, Գոքինիոյ «Չաւարեան» կեդրոնի «Չաքարեան-Սարաճեան» սրահներուն մէջ տեղի ունեցաւ սկաուտական երկօրեայ սեմինար, մասնակցութեամբ խմբապետներու, փոխ-խմբապետներու եւ օգնական երէց-պարմանուհիներու, թիւով 23 հոգի:

Երկօրեայ սեմինարը կը նախատեսէր մասնակիցներուն ներկայացնել ազգային եւ սկաուտական գիտելիքներ: Արդ, առաջին օրը ներկայացուեցան հետեւեալ հինգ դասախօսութիւնները:-

1. Յունահայ գաղութի կազմութիւնը եւ ընդհանուր կառուցները -Հայաստան-Սփիւռք-նորՍփիւռք եւ ապագայ հեռանկարներ՝ Յովսէփ Պարագեան:
2. Սկաուտութեան գաղափարը եւ Հ.Մ.Ը.Մ.ի սկաուտութեան նպատակը՝ Յակոբ Յովակիմեան:
3. Բնակութիւնը բնութեան մէջ՝ Սարոնիքոս շրջանի սկաուտ ընդհանուր պետ Գոսթաս Լիզերոս:
4. Միութենական քարտուղարութիւնը եւ տեղեկագրութիւն՝ Հռիփսիմէ Յարութիւնեան:
5. Խարուկահանդէս՝ Սերգօ Մովսէսեան:

Սեմինարին երկրորդօրը ներկայացուեցան հետեւեալ նիւթերը:-

1. Սկաուտական տեղագրութիւնը եւ չափագիտութիւն՝ Գոսթաս Լիզերոս:
2. Արցախեան պահանջատիրութիւնը եւ անկախ Հայաստանի Հանրապետութիւնը՝ Սերգօ Գուլյումճեան:



նի Հանրապետութիւնը՝ Սերգօ Գուլյումճեան:

3. Ազգային երկու քայլերգներու մեկնաբանութիւն (Յունաստանի եւ Հայաստանի)՝ Արշալոյս Սափրիչեան:
4. Սկաուտական քարտէսագիտութիւն՝ Յունաստանի սկաուտական Ֆետերասիոնի կողմէ Փանտելիս Արդիրիոս:
5. Հայաստանեայց եւ յունական եկեղեցիներու միջեւ կրօնական զանազանութիւններ եւ աստիճաններ՝ յունահայոց թեմի Առաջնորդ Խորէն Եպս. Տողրամաճեան:

Բացի դասախօսութիւններէն, որոնց ներկաները հետեւեցան մեծ հետաքրքրութեամբ, սեմինարին առիթ տրուեցաւ մասնակիցներուն հարցումներու եւ զրոյցներու: Երկու օրւան ընթացքին գործադրուեցաւ սկաուտական յաւելեալ եւ լրացուցիչ յայտագիր:

Առաջին օրը, երեկոյեան, սեմինարին մասնակիցները գիշերեցին ակումբին մէջ: Մթնոլորտը շատ հաճելի էր: Տեղի ունեցան սկաուտական խաղեր:

Երկու օրուան ճաշերու պատրաստութիւնը հոգացած էին Աթէնքի եւ Գոքինիոյ Սկաուտ-Սորհուրդներու քոյրերը:

Սեմինարը վերջ գտաւ դրօշակի արարողութեամբ, Շրջանային խմբապետ եղբ. Պետրոս Միքայէլեանի կողմէ կատարուած ծրագրի եզրափակիչ խօսքով, քաջալերական մաղթանքներով եւ համապատասխան յայտարարութիւններով:





«ՄԻՀՐԱՆ ՇԻՄՇԻՐԵԱՆ ՍԿԱՌԻՏԱԿԱՆ ՖՈՆԾ»ԻՆ ԿԸ ՆՈՒԻՐԵՆ

Շարունակուած Բ. կողքէն

- Տէր եւ տիկին Գրիգոր Գրիգորեան	100 \$	- Տէր եւ տիկին Մանուկ եւ Քնար Քեօշկերեան	(Սուրիա) 25 \$
- Տէր եւ տիկին Յակոբ եւ Մարալ Գարամանուկեան	100 \$	- Տէր եւ տիկին Ժագ Պոյաճեան	20 \$
- Տէր եւ տիկին Յակոբ եւ Թալին Գլպաշեան	100 \$	- Տէր եւ տիկին Յակոբ Օթճեան	20 \$
- Տէր եւ տիկին Արամ Պոսնոյեան	100 \$	- Քոյր էլօ Սելքոնեան	20 \$
- Տէր եւ տիկին Նազօ եւ Նորա Պապիկեան	100 \$	- Ժանէթ Խէյրալլա եւ ընտանիք	20 \$
- Տիկին Մարի Պապիկեան	100 \$	- Տէր եւ տիկին Սեպուի Թոփալեան	20 \$
- Կարօ Շահապեան	100 \$	- Տէր եւ տիկին Յովսէփ Էսկիճեան	20 \$
- Ժեռարտ Թապուրեան	100 \$		
- Ժեռարտ կրտսեր Թապուրեան	100 \$	- Այնճարի քաղաքապետութիւն	500.000 Լ.Ն.
- Պայթարեան եղբարք	100 \$	- Տէր եւ տիկին Յակոբ եւ Սոնա Եափուճեան	200.000 Լ.Ն.
- Տէր եւ տիկին Ժիրայր Պարսումեան	100 \$	- Տէր եւ տիկին Սլօ եւ Յուրի Եափուճեան	200.000 Լ.Ն.
- Տէր եւ տիկին Շահէ Պարսումեան	100 \$	- Յ.Մ.Ը.Մ.ի Պէյրութի մասնաճիւղի վարչութիւն	200.000 Լ.Ն.
- Տէր եւ տիկին Արա Պարսումեան	100 \$	- Տէր եւ տիկին Վահագն եւ Ասդրիտ Շամլեան	(Գանատա) 150.000 Լ.Ն.
- Տէր եւ տիկին Մարտիկ Պօղոսեան	100 \$	- Տէր եւ տիկին Վարուժան Թորիկեան	100.000 Լ.Ն.
- Տէր եւ տիկին Կարօ Սալխանեան	100 \$	- Անդրանիկ Մաըրլեան	100.000 Լ.Ն.
- Տէր եւ տիկին Պետիկ Սապունճեան	100 \$	- Կեսարիոյ հայրենակցական միութիւն	100.000 Լ.Ն.
- Նուպար Խանամիրեան	100 \$	- Տէր եւ տիկին Մասիս Ալեքսանտրեան	100.000 Լ.Ն.
- Բիւզանդ Գեորգեան	100 \$	- Տէր եւ տիկին Եղիկ Մղտեսեան	100.000 Լ.Ն.
- Տէր եւ տիկին Սազօ եւ Մարալ Կեօյպաշեան	100 \$	- Տիար Սազօ Արմէնեան	100.000 Լ.Ն.
- Յ.Մ.Ը.Մ.-Յ.Ա.Ս.Կ.ի վարչութիւն	100 \$	- Տէր եւ տիկին Սիմոն Գայթանճեան	100.000 Լ.Ն.
- Տէր եւ տիկին Յարութիւն Յարութիւնեան	(Հայաստան) 100 \$	- Յ.Մ.Ը.Մ.ի ֆուրսուլի ակադեմիայի յանձնախումբ	100.000 Լ.Ն.
- Տէր եւ տիկին Արմէն Կէտիկեան (Գանատա)	100 \$	- Յ.Մ.Ը.Մ.ի Այնճարի մասնաճիւղի վարչութիւն	100.000 Լ.Ն.
- Տիրան Շահինեան (Գանատա)	100 \$	- Յ.Մ.Ը.Մ.ի Պուրճ Համուտի մասնաճիւղի վարչութիւն	100.000 Լ.Ն.
- Տէր եւ տիկին Կարօ Սեդրակեան	(Միացեալ Նահանգներ) 100 \$	- Յ.Մ.Ը.Մ.ի Գինիի մասնաճիւղի վարչութիւն	100.000 Լ.Ն.
- Տէր եւ տիկին Նուպար Սոֆեան	100 \$	- ԼՕԽ-ի Շրջանային վարչութեան	հաշուեքննիչ յանձնախումբ 100.000 Լ.Ն.
- Տէր եւ Տիկ. Պօղոս եւ Նուէր Չոլաքեան	100 \$	- Հայկական հաստատութիւն մը	100.000 Լ.Ն.
- Տէր եւ Տիկ. Մանուէլ եւ Սիրան Մարսէլեան (Մ. Նահանգներ)	100 \$	- Տէր եւ տիկին Խաչիկ Ադամեան	100.000 Լ.Ն.
- Տէր եւ Տիկ. Բաբգէն Կարապետեան (Գանատա)	100 \$	- Տէր եւ տիկին Ժորժ Վարդանեան	100.000 Լ.Ն.
- Տէր եւ Տիկ. Սեւան Ալեքսանտրեան	100 \$	- Տէր եւ տիկին Գաբրիէլ եւ Սոնա	Հայրապետեան 100.000 Լ.Ն.
- Տէր եւ Տիկ. Սեդրակ Էմիօղլեան եւ գաւակունք	100 \$	- Տէր եւ տիկին Մարտիկ եւ Թամար	Խանճիհանեան» 100.000 Լ.Ն.
- Տէր եւ Տիկ. Նուպար եւ Մարօ Պաղպուտարեան	100 \$	- Տէր եւ տիկին տոքթ. Պեռնար Փլիւմ	100.000 Լ.Ն.
- Տէր եւ տիկին Կոստան Եափուճեան	50 \$	- Տէր եւ տիկին Լեւոն Տէր Սարգիսեան	100.000 Լ.Ն.
- Սեթր Ժագ Չուխատարեան	50 \$	- Տէր եւ տիկին Գոնի Արեւեան	100.000 Լ.Ն.
- Տէր եւ տիկին Նազարէթ Պաուրեան	50 \$	- Տէր եւ տիկին Վրէժ Թազեան	100.000 Լ.Ն.
- Տէր եւ տիկին Աբիկ Տանակեօզեան	50 \$	- Տիկ. Արսիմէ Թորիկեան	100.000 Լ.Ն.
- Օրդ. Ալիս Գազանճեան	50 \$		
- Օրդ. Եւնիկէ Ֆիլիաննէսեան	50 \$		
- Սոնա Պօղոսեան	40 \$		
- Հրաչ Պոյաճեան	40 \$		
- Րաֆֆի Հատիտեան (Գանատա)	40 \$		
- Տէր եւ տիկին Արա Հաճաքեան	30 \$		

- Տիրուկ եւ Արփի Չպուրճեաններ	100.000 Լ.ն.	- Տէր եւ տիկին Բենիամին Պշաքճեան	50.000 Լ.ն.
- Ներսէս Տօնիկեան	100.000 Լ.ն.	- Գեղանի եւ Վեհանոյշ Էթիմեզեան	50.000 Լ.ն.
- Աբրահամեան եղբարք	100.000 Լ.ն.	- Վարդուհի Անդոյեան	50.000 Լ.ն.
- Ստեփանեան եղբարք (Դամասկոս)	100.000 Լ.ն.	- Ռոզի Զանքաշ	50.000 Լ.ն.
- Ժըրժըս Զաթուն	100.000 Լ.ն.	- Ժիլի Ապու Ժաուտէ	50.000 Լ.ն.
- Մարուն Շալիուպ	100.000 Լ.ն.	- Տիկ. Արաքսի Շահինեան	50.000 Լ.ն.
- Տէր եւ տիկին Մոսիկ Պարսումեան	50.000 Լ.ն.	- Տէր եւ Տիկ. Նազարէթ Պապուրեան	50.000 Լ.ն.
- Տէր եւ տիկին Սեւակ եւ Սալբի Աբրահամեան	50.000 Լ.ն.	եւ զաւակունք	50.000 Լ.ն.
- Տէր եւ տիկին Սեդրակ Խզարճեան	50.000 Լ.ն.	- Ժորժ Ֆարիաթ	40.000 Լ.ն.
- Մալխասեան ընտանիք	50.000 Լ.ն.	- Արփի Մանկասարեան	30.000 Լ.ն.
- Զ.Մ.Ը.Մ.ական եղբայր մը	50.000 Լ.ն.	- Տիկ. Անայիս Թասլաքեան	30.000 Լ.ն.
- Զ.Մ.Ը.Մ.ի Ժըտէյտէի մասնաձիւղ	50.000 Լ.ն.	- Տէր եւ տիկին Նազարէթ եւ Արփի Կոստանեան	30.000 Լ.ն.
- Տէր եւ տիկին Սեզար եւ Քարլա Ռըշտան	50.000 Լ.ն.	- Տիկ. Ռաֆիք Զաննա եւ ընտանիք	30.000 Լ.ն.
- Տէր եւ տիկին Աւետ Էմօղլեան	50.000 Լ.ն.	- Զրայր Սաղըրեան	30.000 Լ.ն.
- Տէր եւ տիկին Յակոբ Լատոյեան	50.000 Լ.ն.	- Տիկ. Շամիկ Ֆահիլպաշեան	30.000 Լ.ն.
- Տէր եւ տիկին Զրայր Ադամեան	50.000 Լ.ն.	- Տիկ. Սեդա Ռունճեան-Խտըշեան	30.000 Լ.ն.
- Տէր եւ տիկին Զրայր Ծերունեան	50.000 Լ.ն.	- Եուսէֆ Զատտատ	30.000 Լ.ն.
- Տէր եւ տիկին Յարութ Լաքիսեան	50.000 Լ.ն.	- Իրմա Գերեճեան	25.000 Լ.ն.
- Տէր եւ տիկին Ռոժէ եւ Ֆաթմէ Ռեպազ	50.000 Լ.ն.	- Յովհաննէս Եթերեան	25.000 Լ.ն.
- Տէր եւ տիկին Ռազմիկ Յովսէփեան	50.000 Լ.ն.	- Տիկ. Սեդա Մետրոպեան	20.000 Լ.ն.
- Էլի Մըլքի	50.000 Լ.ն.	- Ռոպեր Գայսերեան	20.000 Լ.ն.
- Սեսին Շեհուան	50.000 Լ.ն.	- Տիպ Ասաատ Խուրի եւ ընտանիք	20.000 Լ.ն.
- Իշխան Մուրատեան ընտանիք	50.000 Լ.ն.	- Ռընէ Աշքար	15.000 Լ.ն.
- Ժան Ներսէսեան	50.000 Լ.ն.	- Տիկ. Զուրի Մուրատեան	5.000 Լ.ն.
- Արմէն Կիւլտալեան	50.000 Լ.ն.		
- Սարգիս Պալղաշեան եւ ընտանիք	50.000 Լ.ն.		



- Full of Charme Hotel, New Construction, French Architecture, International Standards, 100 m from the Republic Square and 15 minutes from the Yerevan International Airport.
- 44 Rooms and 3 Suites with all comforts, all climate controled, minibar, shower or bathroom with private WC, hairdryer. Satellite TV, international direct dial phone. Internet & Email access.
- Individualized and personal service, 24 hour reception and room service
- Bar



*Feel at home,
away from home...*

Reservations Yerevan
32-38, Hanrabedoutian Street,
Yerevan 375010, Armenia
Tel 374 10 54 60 60 • Fax 374 10 54 60 50
sales@europehotel.am

www.europehotel.am

ԵՂԲԱՅՐ ՎԱՀՐԱՄ ԴԱՆԻԷԼԵԱՆԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Արմեն Կետիկեան ԹՈՐՈՆԹՕ

Սիրելի եւ յարգելի անձ մը, մանաւանդ՝ մտերիմ ընկեր մը: Վերջին 15 տարիներուն ճանչցայ զինք, Հ.Մ.Ը.Մ-ի ընտանիքին որպէս մէկ անդամը, ղեկավար դիրքի վրայ, համա-Հ.Մ.Ը.Մ-ական ձեռնարկներու եւ ժողովներու ընթացքին, իսկ վերջին տարիներուն՝ որպէս պաշտօնակից:

Դանիէլեան ընտանիքէն առաջին անձը, զոր 1970-ական թուականներուն ճանչցայ, եղբ. Դանիէլ Դանիէլեանն էր: պատուական հայորդի, նշանաւոր մարզիկ, Հ.Մ.Ը.Մ-ական ղեկավար, նախ Յունաստան եւ ապա՝ Գանատա, Մոնթրէալ: Եղբ. Լուտեր Մասպանանճեանի հետ Հ.Մ.Ը.Մ-ի Գանատայի շրջանի կազմակերպման աշխատանքին լծուած: Եղբ. Դանիէլ Դանիէլեան հետագային ընտրուեցաւ Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական Վարչութեան անդամ:

Եղբայր Դանիէլի շունչով եւ Հ.Մ.Ը.Մ-ական դաստիարակութեամբ մեծցած եղբ. Վահրամ չէր կրնար տարբեր ըլլալ իր անսակարկ նուիրումով, դաշնակցական եւ Հ.Մ.Ը.Մ-ական կազմաւորումով, ան՝ որ իր ամբողջ կեանքին ընթացքին աշխատեցաւ հայ ժողովուրդի, Հայ Դատի եւ Հայրենիքի համար: Ուր որ ապրեցաւ, Յունաստան, Գանատա թէ Մ. Նահանգներ, ան միշտ պատնէշի վրայ էր օգնելու, կազմակերպելու, նախաձեռնելու կամ աշխատելու գաղութի բոլոր կարիքներուն համար:

Տարիներու ընթացքին, բազմաթիւ ընկերներու եւ Հ.Մ.Ը.Մ-ականներու հետ աշխատակցած կամ բարեկամացած եմ, եւ մեծ է թիւը անոնց, որոնց հետ մտերիմ գործակիցներ եղած ենք: Եղբ. Վահրամը տարբեր էր բոլորէն: Համեստ, ժպիտը միշտ դէմքին, կարծես տաքուկ եւ մտերմիկ տրամադրութիւն մը կը զգայիր իր ներկայութեան: Անկեղծ եւ հարցերը հանդարտ կերպով վերլուծող, սրտցաւ, անշահախնդիր, համոզելու եւ համոզուելու պատրաստ: Լաւ ժողովական էր եւ մանաւանդ՝ լաւ խօսակից ընկեր: Պատահեցաւ, որ քանի մը օր, ժողովներէ անկախ, Հայաստան միասին ժամանակ անցուցինք, պտրտեցանք Երեւանի փողոցները եւ երկար զրոյցներ ունեցանք զանազան նիւթերու շուրջ: Խորունկ, խելացի եւ կեանքը սիրող



Եղբայր Վահրամ (ձախէն առաջինը) Հ.Մ.Ը.Մ-ի վերջին Պատգամաւորական Ժողովին, նկարուած՝ միութեան Եւրոպայի պատգամաւորներուն հետ:

անձ էր եղբ. Վահրամ: Այդ օրէն վերջ մեր ընկերութիւնը աւելի սերտացաւ: Յաճախ հեռաձայնով կը խօսէինք եւ կը գրուէինք ընդհանրապէս Հ.Մ.Ը.Մ-ը յուզող հարցերու, ինչպէս նաեւ մեր թողնելուն մասին: Անցեալ տարուան Զատիկուան շաբաթը հեռաձայնած էր Զատիկը շնորհաւորելու համար եւ յայտնած էր, թէ վիրաբուժական գործողութեան մը պիտի ենթարկուի: Անկէ վերջ քանի մը անգամ խօսեցայ հետը, սակայն ալ նոյն եղբ. Վահրամը չէր, բայց միշտ «լաւ եմ» կ'ըսէր: Այսօր եղբ. Վահրամը մեզի հետ չէ այլեւս: Ան մեկնեցաւ այս աշխարհէն, «Ըլլալով հաւատարիմ Աստուծոյ եւ ծառայելով ազգին ու հայրենիքին: Միշտ օգնեց ուրիշին եւ գործեց իբրեւ պարտականութեան գիտակից, արի եւ վեհանձն մարդ»:

Իր ընտանիքը կորսնցուց կողակից մը, հայր մը եւ մեծ հայր մը, իսկ մենք՝ իր մտերիմները, գործակից ընկերներն ու բարեկամները՝ լաւ Հ.Մ.Ը.Մ-ական մը եւ կուսակցական ընկեր մը:

Բայց նաեւ բոլորս բախտաւոր ենք, որ եղբ. Վահրամ Դանիէլեանին պէս անձ մը մեր կեանքին մաս կազմեց:

Հողը թեթեւ գայ վրադ սիրելի՛ եղբայր Վահրամ Դանիէլեան:



2011. Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական Վարչութեան լիազումար Գիտ Երեւանի մէջ: Եղբ. Վահրամ ձախէն առաջինը:

ԵՂԲԱՅՐ ՎԱՀՐԱՄ ԴԱՆԻԷԼԵԱՆԻ ԱՆԹԱՌԱՄ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Հրաչ Տեր Սարգիսեան ՄՈՆԹՐԵԱԼ

Եղբայր Վահրամ Դանիէլեանի վաղաժամ մահով Հ.Մ.Ը.Մ-ի մեծ ընտանիքը կը կորսնցնէ վաստակաշատ եղբայր մըն ալ: Ափսո՛ս, որ իր գործը չէր ամբողջացուցած եւ տակաւին շատ տալիք ունէր...

Եղբայր Վահրամ արժանաւոր գաւազն էր Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական Վարչութեան նախկին անդամ՝ եղբայր Դանիէլ Դանիէլեանի: Իր հօրը քայլերուն հետեւելով՝ ան դաստիարակուած էր մարդկային եւ բարոյական արժէքներով, դառնալով լաւ մարդ, տիպար հայ եւ օրինակելի միութենական:

18 տարեկանին, 1963 թուականին, եղբայր Վահրամ իր ծննդավայր Յունաստանէն կը գաղթէ Մոնթրէալ, ուր երիտասարդ տարիքին կը ցուցաբերէ մեծ պատրաստակամութիւն եւ նուիրում օգտակար դառնալու գաղութին:

Մարզական բնագաւառէն ներս, եղբայր Վահրամ մաս կը կազմէ Մոնթրէալի հայկական առաջին Փութպոլի խումբին («Արմէնիա»), բաղկացած՝ մեծամասնութեամբ Յունաստանէն ժամանած մարզիկներէ: Խումբը պատուաբեր արդիւնքներով օտարներուն կը ներկայացնէ Հ.Մ.Ը.Մ-ը եւ հայ համայնքը:

Եղբայր Վահրամին ներդրումը մեծ կ'ըլլայ Փութպոլի այս խումբին կազմաւորման եւ բարձրորակ խաղարկութեան վրայ: Դաշտին վրայ իր ազնիւ, տիպար եւ Հ.Մ.Ը.Մ-ավայել

կեցուածքով ան կ'արժանանայ բոլորին գնահատանքին: Իւրաքանչեւ խաղի իր ոճով, ան կրնար որպէս յետսապահ հանդարտեցնել խաղը եւ լայն տեսողութեամբ (peripheral vision) իր խաղընկերները մասնակից դարձնել խումբին վերջնական յաջողութեան: Մարզադաշտերու վրայ իր ունեցած մարզավայել կեցուածքը եղբայր Վահրամ կը ցուցաբերէ նաեւ այլ նախաձեռնութիւններու եւ ժողովական կեանքէ ներս:

Եղբայր Վահրամ իր տիկնոջ՝ Ուսաննայի եւ գաւազններուն՝ Տանիէլի եւ Դանիայի հետ 1980-ին կը մեկնի Ֆլորիտա, ուր կը շարունակէ իր առաքելութիւնը՝ Հ.Յ.Դ-ի եւ Հ.Մ.Ը.Մ-ի ճամբով օգտակար դառնալով գաղութին կազմաւորման եւ յառաջդիմութեան աշխատանքներուն:

Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական Վարչութեան 8 տարուան մեր պաշտօնավարութեան շրջանին, մենք մօտէն ծանօթացանք եղբայր Վահրամը, ճանչցանք իր անբասիր նկարագիրը, ժողովական կարգապահութիւնը, հաւաքական որոշումներու ենթարկուիլը, նոյնիսկ երբեմն հակառակ իր համոզումներուն, ինչ որ զինք արժանացուց բոլորին յարգանքին ու գնահատանքին:

Տակաւին թարմ է մեր յիշողութեան մէջ յունարէնով իր արտասանած սրտաշարժ խօսքը՝ 2005-ի Աթէնքի Համա-Հ.Մ.Ը.Մ-ական 7-րդ խաղերու փակման արարողութեան:

Այսօր, թէեւ մեզմէ յաւելտ բաժնուած ես սիրելի՛ եղբայր Վահրամ, բայց յիշատակդ միշտ վառ կը մնայ մեր սրտերուն եւ հոգիներուն մէջ:

Խունկ ու մոմ անթառամ յիշատակիդ:

ԳԱՂԱՓԱՐԻ ՄԱՐԴԸ

(ԵՂԲ. ՎԱՀՐԱՄ ԴԱՆԻԷԼԵԱՆԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ)

Պարէթ Մարոնեան ՖԼՈՐԻՏԱ

1 Յունուար 2014-ը տխուր օր մը եղաւ մեզի համար:

Տարուան առաջին օրը իմացանք, որ կորսնցուցած ենք հայր մը՝ Ֆլորիտայի գաղութի կարեւոր դէմքերէն մէկը, Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական Վարչութեան նախկին անդամը: Վահրամ Դանիէլեան ոչ եւս էր:

Եղբայր Վահրամ բարի հսկայ մըն էր, որ շարունակ կ'ուզէր օգնութեան հասնիլ, օժանդակել՝ բառին բուն իմաստով:

Եղբայր Վահրամ իր բովանդակ կեանքին ընթացքին գործեց անաչառօրէն եւ քրտինք թափեց, որպէսզի յաջողի իր ասպարէզին մէջ:

Եղբայր Վահրամ իր քսակը լայն բանալով ջանաց կեդրոն մը ունենալ Ֆլորիտայի մէջ: Ան կազմակերպեց դրամարշաւ եւ կեդրոն մը ունենալու գաղափարը հետապնդեց մեծ խանդավառութեամբ ու նուիրումով:

Բոլորս ալ շատ լաւ կը յիենք, թէ ան ի՞նչպէս շինեց Ֆորթ Լոտրատէյլի Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ խորանը: Ան ծառայեց իր եկեղեցիին, իր պաշտած Հայաստանին:

Միշտ ժպտուն եւ ընկերներուն կողմէ սիրուած, ան հայ



1997. Համա-Հ.Մ.Ը.Մ.ական 5-րդ մարզախաղերու օրերուն, Արեւելեան Մ. Նահանգներ, եղբայրներ Վահրամ Դանիէլեան, Գօգօ Պալեան, Միհրան Շիմշիրեան եւ Հրաչ Սիսեռեան:

րական յատուկ մօտեցում մը կը ցուցաբերէր: Այսպէս, հօր մը նման, իւրաքանչիւր հարց հանդարտօրէն ու լրջօրէն քննելով, ան կը փոխանցէր իր կարծիքը: Միշտ, որեւէ հարցի շուրջ, կապ կը հաստատէինք իրեն հետ եւ կը փափաքէինք ունենալ իր կարծիքն ու խորհուրդը:

Եղբայր Վահրամ որքան համեստ էր եւ այդ ալ հսկայ համեստ մը: Այնքան մը, որ իր հասցէին ուղղուած քննադատութիւնները ընդունելի էին, սակայն հայրենիքին՝ Հայաստանին հանդէպ որեւէ անարգանք անոր համար անընդունելի էր:

Ան շիտակ գործող մարդ էր եւ վստահելի: Այդ իսկ պատճառով յարգուած էր եւ երբեք թշնամի չունէր: Ան երբեք փառքի ետեւէ չվազեց, ընդհակառակն՝ մնաց գաղափարական մարդ եւ յաւելեալ շեշտելով՝ տիպար դաշնակցական:

Քաղութէն ներս ղեկավարի իր պարտականութիւնները պահելով, ան ունեցաւ բարձր մակարդակի հանդիպումներ նախագահ Պիլ Բլինթընի, հայրենի նախագահներու եւ իր ծննդավայր Յունաստանի բարձրաստիճան անձնաւորութիւններու հետ:

Եղբայր Վահրամի վերջին գործերէն մէկը շրջանէն ներս կատարուած դրամահաւաքն էր՝ 12 հազար տոլար, սուրիահայութեան համար:

Քանի մը ամիս ետք, քաղցկեղէ վարակուած, ան շարունակեց գործել եւ միայն վերջին շաբաթներուն ստիպուեցաւ ծառայել անկողինի:

Վերջին անգամ երբ հանդիպեցանք, ան անհամբեր կը սպասէր: Աչքերը բաց, սեղմեց մեր բոլորին ձեռքը... ժպտաց: Կը զգայինք թէ վերջին անգամ ըլլալով կը ձեռնըւինք մեծ անձնաւորութեան մը հետ:

Եղբայր Վահրամ այլեւս մեր շատ սիրելի ընկերը չէր, այլ յետ մահու ժառանգ...

Այսպէս քաջատեղեակ եղանք թէ ի՞նչ ըսել է տիպար միութենական եւ կուսակցական ըլլալ:

Հողը թեթեւ գայ վրադ, եղբայր Վահրամ:

with the complements of

ABRIMIAN BROTHERS, NEW YORK

Հ.Մ.Ը.Մ.Ի ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐՈՒՄ, ԾԱՌ-ԱՅՈՒԹԵԱՆ ԵՒ ՀԱՒԱՏԱՐՄՈՒԹԵԱՆ ԿԵԱՆՔ ՄԸ (Հ.Մ.Ը.Մ.Ի ՍՈՒՐԻՈՅ ՇՐՋԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԴԱՄԲԱՆԱԿԱՆԸ՝ ԵՂԲ. ՏԻԳՐԱՆ ՉԱՓԱՆԵԱՆԻ ՄԱՀՈՒԱՆ ԱՌԻԹՈՎ)



Մեզի համար դժուար է հարազատ Հ.Մ.Ը.Մ.ական է մը բաժնուիր, մանաւանդ՝ եղբորմէ մը, որ իր ամբողջ կեանքը նուիրած է ազգին եւ Հ.Մ.Ը.Մ.ի ծառայութեան: Եղբ. Տիգրան Չափանեան իր 85-ամեայ կեանքին 80 տարիները անցուցած է Հ.Մ.Ը.Մ.ի շարքերուն մէջ: Երանի՛ այդ ծառայութիւնը ունեցող անձնաւորութեան, որ տարիներ շարունակ չփնտռեց մեծ ու փոքր պաշտօններ, չպայքարեցաւ աթոռի մը հասնելու համար, այլ՝ պաշտօնները իրեն եկան, որովհետեւ եղբ. Տիգրան հեզ էր իր բնաւորութեամբ, անկեղծ էր իր յարաբերութեամբ, համեստ էր իր արտայայտութեամբ, միեւնոյն ժամանակ խիստ էր սխալին եւ սըխալողին հանդէպ: Ան կը ցանկար միշտ լաւագոյնը տալ Հ.Մ.Ը.Մ.ին: Կ'ուրախանար Հ.Մ.Ը.Մ.ի նուաճումներով եւ կը տխրէր ճախողութիւններով: Եղբ. Տիգրան Չափանեանի կեանքը եղաւ ծառայութիւն եւ հաւատարմութիւն Հ.Մ.Ը.Մ.ի սկզբունքներուն:

Եւ փոքր չկայ բացէ՛ք դաշտերու դռները, որպէսզի բոլոր Հ.Մ.Ը.Մ.ականները մարգուին միութեան դրօշին տակ»:

Յիշատակդ անթառամ մնայ եւ հողը թեթեւ զայ վրադ եղբայր Տիգրան Չափանեան:

Փոքր տարիքէն ան արձանագրուեցաւ Հ.Մ.Ը.Մ.ի շարքերուն եւ անցաւ միութենական կեանքի բոլոր հանգրուաններէն, սկաւտական եւ մարզական: Յարգուած բժիշկը եղաւ Հ.Մ.Ը.Մ.ի Հալէպի վարչութեան անդամ, ապա՝ ատենապետ, Հ.Մ.Ը.Մ.ի Սուրիոյ Շրջանային Վարչութեան անդամ, ապա՝ ատենապետ: Իր ունեցած տիպար կեցուածքին եւ անկեղծ յարաբերութեան շնորհիւ արժանացաւ միութեան «Ծառայութեան» եւ «Արտակարգ» շքանշաններուն: Ան իր մասնակցութիւնը բերաւ Հ.Մ.Ը.Մ.ի Պատգամաւորական Ժողովներուն, յարգանք պարտադրելով ժողովականներուն: Հ.Մ.Ը.Մ.ի հիմնադրութեան 95-ամեակի յուշանուէրին ստանձնման պահուն, ան իր սրտի խօսքը փոխանցելով ըսաւ. «Հ.Մ.Ը.Մ.ը բոլորիս է, մեծ





ԱՆԿԱՐԳԵԼԸ

Պատրաստե՛ք Շաղիկ Գեորգեան ՊԵՅՐՈՒԹ

Մօտ հարիւր տարի առաջ, դերասան Կլէպ Քոթեյնիքովի շնորհիւ, մարդիկ ազատ շունչ մը քաշեցին, երբ կարողացան օդանաւի արկածի մը պարագային, փրկուել ու անվրնաս էջք կատարել, պարզապէս սեղմելով փոքրիկ ձգան մը, որ փրկարար անկարգելը ուղեւորը հանգիստ կ'իջեցնէր մինչեւ երկիր:

Կլէպ մեքանիքի մասնագէտ չէր եւ գրեթէ բան չէր գիտեր օդանաւերու եւ անոնց սարքաւորումներուն մասին: Այդ տարիներուն օդանաւերը դեռ նոր ստեղծուած

էին եւ օդաչուներն ալ անփորձ էին: Օր մը, դերասանը ականատես եղաւ օդանաւի արկածի մը: Ան երբեք չմոռցաւ այդ տեսարանը եւ փորձեց գտնել միջոց մը՝ փրկելու համար արկածահար օդանաւին մէջ գտնուողները:

Քոթեյնիքով այդ մէկը ըրաւ փոքրիկ արկղի մէջ գտնուող զսպանակներու օգնութեամբ: Արկղիկը կ'ամրացուէր թիկունքին եւ անհրաժեշտութեան պարագային փոքրիկ օղակէն քաշելով՝ ակնթարթօրէն կը բացուէր անկարգելին տուփիկը, եւ զսպանակները «դուրս կը նետէին» անկարգելը: Քոթեյնիքով շարունակեց աւելի ու աւելի կատարելագործել անկարգելը, եւ շուտով ան ո՛չ միայն սկսաւ մարդիկը փրկել օդանաւի արկածներէ, այլեւ՝ կարելիութիւնը ստեղծեց արկածախնդիր մարզախաղերու սիրահարներուն նոր մարզաձեւ մը ստեղծելու:



ՊՈՒՐԱՆՈ ԿՂԶԻՆ

Պուրանօ կղզին կը գտնուի Վենետիկի շատ մօտ: Այս կղզին կարելի է հասնիլ նաւակով, ընդամէնը 40 վայրկեանէն: Կղզին հիմնած են հոռմէացիները՝ բարբարոսներու արշաւանքներէն զերծ մնալու համար: Այստեղ առաջին տուները շինուած են եղէգներէ, որոնք իրարու ամրացուած են կաւի միջոցով: Տարիներ ետք, տեղւոյն բնակիչները եղէգը փոխարինած են աղիւսով եւ ներկած են տարբեր գոյներով:




Կղզիին մէջ տարածուած առասպելի մը համաձայն, երբ ծովայինները վերադարձած են կղզի, չեն կրցած մշուշի մէջ զանազանել իրենց տուները եւ այդ պատճառով ալ կղզիին բնակիչները որոշած են տուները ներկել տարբեր գոյներով:

Այսօր, Պուրանօ կղզիին մէջ ի գործ կը դրուին որոշ օրէնքներ՝ տուներու արտաքին գունաւորման համար: Եթէ բնակիչը կը փափաքի իր տան արտաքին բաժինը ներկել, ան պարտաւոր է գրաւոր դիմում կատարել՝ արտօնութիւն ստանալու համար: Տեղական իշխանութիւնները իրենք



կ'որոշեն թէ ի՞նչ գոյն պէտք է ըլլայ տուեալ շինութիւնը:

Թէեւ կղզին բնակեցուած է 6-րդ դարէն, սակայն ան յայտնի դարձած է միայն 16-րդ դարուն, երբ տեղւոյն բնակիչները սկսած են զբաղիլ ասեղնագործութեամբ: Մինչեւ 18-րդ դար, կղզիէն Եւրոպա կ'արտահանէին այդ ասեղնագործութիւնները: Սակայն, շուտով առեւտուրը կանգ կ'առնէ: 1872 թուականին այստեղ կը հիմնուի ասեղնագործութեան դպրոց մը, որ յաջողութիւն չի գտներ: Այսօր, կղզիին մէջ ոչ ոք կը զբաղի ասեղնագործութեամբ, որովհետեւ ան բարդ եւ ոչ շահաւէտ զբաղում մըն է:



ԿՈՎԸ

Կովը ընտանի կենդանի է: Ան մարդու կողմէ ընտելացած է մօտ 8 հազար տարի առաջ: Կովը մարդու ընտելացուցած առաջին կենդանիներէն է: Հնագոյն ցեղերը կովերու նախիրներ կը պահէին միայն միսի եւ կաշիի համար:

Աւելի ուշ, նստակեցութեան անցնելէ ետք, մարդիկ սկսան ուժեղ կենդանիները լծել գութանին եւ անոնցմով բեռներ փոխադրել:

Հնադարեան մարդոց համար կովը եւ ցուլը այնքան մեծ նշանակութիւն ունէին, որ շատ մը ժողովուրդներ զանոնք աստուածացուցած են: Իսկ կովէն կաթ ստացած են աւելի քան 2800 տարի առաջ: Հետագային, կաթէն սկսան պատրաստել կարագ, պանիր, մածուկ եւ այլ կաթնամթերքներ:

Կովերու կեանքի տեւողութիւնը մօտ 20, երբեմն մինչեւ 35 տարի է: Կովերը իրենց ձագերը կը ծնին մէկ-մէկ (հազուադէպ բացառութիւններով):




Կովերու տարեկան միջին կաթնատուութիւնը 3500-4000 քլկ է: Կովերու ցեղերը բազմաթիւ են: Յաճախ զանոնք կ'անուանեն այն տեղին անունով, ուր անոնք բուծանուած են: Ամէն ցեղ ունի իր առաւելութիւններն ու թերութիւնները:

Որպէսզի կովը շատ կաթ տայ, անհրաժեշտ է գայն ճիշդ խնամել եւ լաւ կերակրել: Ուստի, անասնապահը պէտք է շատ հմուտ եւ ուշադիր ըլլայ:



Տարբեր Հայեացքով



Էլի Հուլիշեան

ՍՈՒՏՈՔՈՒ

	6					4	
1		9				6	3
	2		4		7		1
		1		2		3	
			9	8	5		
		2		4		8	
	7		5		2		3
5		4				1	2
	1						6

Հորիզոնական եւ ուղղահայեաց 9 շարքերով եւ սիւնակներով (9x9) կազմուած գծացանցը բաղկացած է իւրաքանչիւրը 9 քառակուսի հաշուող 9 բաժիններէ (3x3): Բացառումի սկզբունքին կիրարկուծով իւրաքանչիւր քառակուսիի մէջ թուանշան մը գետեղել՝ այնպէս մը, որ հորիզոնական իւրաքանչիւր շարք, ուղղահայեաց իւրաքանչիւր սիւնակ եւ 9 քառակուսիից իւրաքանչիւր բաժին ունենայ 1-9 թուանշանները՝ իւրաքանչիւր թուանշան միայն մէկ անգամ գործածուելու պայմանով: Այլ խօսքով, ոչ մէկ պարագայի արտօնուած է թուանշան մը կրկնել միեւնոյն շարքին, սիւնակին եւ բաժինին մէջ: Սկսելու համար, կարգ մը թուանշաններ իրենց ճշգրիտ քառակուսիներուն մէջ գետեղուած են:

Նախորդին լուծումը

3	1	9	5	6	7	2	8	4
8	4	5	1	2	3	6	7	9
2	6	7	4	9	8	1	5	3
9	3	1	2	5	4	7	6	8
6	8	4	7	3	1	9	2	5
5	7	2	9	8	6	4	3	1
1	5	3	6	7	9	8	4	2
7	9	8	3	4	2	5	1	6
4	2	6	8	1	5	3	9	7

Պատասխանը՝ յաջորդիւ


ՀՈՐԻՉՈՆԱԿԱՆ

1. Սպանիոյ Ֆուտբոլի կազմերէն:
2. Դաւիթի՝ Գողթի ղէմ գործածած զէնքը:
3. Հով, հողմ:
4. Շաղկապ - Ասեղնագործութեան փայտէ շըրջանակ:
5. Լիբանանի հեծելարչաւի Ֆետերասիոնի Հ.Մ.-Ը.Մ.ական նախագահը:
6. Երկնատուր սնունդ - Քնանալ:
7. Հինգած ալիւրի մանր որդ - Ափրիկեան մայրաքաղաք:
8. Վերաբերեալ - Իգական օտար անուն:
9. Ճիւղ - Ելեկտրական միաւոր - Կտակեր թըռչուններու առաջին ստամոքսը:
10. Ուղէշ - Հաշուել, թուարկել:
11. Իգական անուն - Ուրուագիծ:
12. Երերում - Երկրաչափական գործիք:
13. Խիտ - Կռնակի սապատ - Խաղողի կուտ:
14. Յաւի ճիչ - Անմահական գինի - Անուշահոտ փոքր սեխ:
15. Ծոթրին, կաքաւիտտ - Արական օտար անուն - Տարիք:
16. Լեռնակ - Հանքային կրկնակ աղ - Լեռն Շանթի «... Մարդը»:
17. Կաղկանձէ՛ - Անջրդի տարածութիւն:
18. Զօրաւոր - Ամերիկացի երգչուհի եւ դերասանուհի:
19. Այբուբենէն - Յասմկաքար - Ֆրանսական գետ:
20. Հոնկէ՛ - Գերագոյն իշխան - Ժամանում:

ՈՒՂՂԱՀԱՅԵԱՑ

1. Տպագրական մեքենայ - Նորավարժ:
2. Քահանայի զգեստաւորումներէն - Հակառակորդ - Գամ:
3. Անհաւատ, անկրօն - Յոյն փիլիսոփայ:
4. Հայկական ժողովրդական խմբապար - Նոյն գիրերը - Զրային փոխադրամիջոց:
5. Ապաստան - Ռուս թէնիսիստ:
6. Բազմութիւն - Այբուբենէն - Կրկնուած բաղաձայներ - Արական օտար անուն - Ժլատ:
7. Փողոցային - Լոյծ սեւ ձիւթ - Արգելական:
8. Անձնական դերանուն - Ածականակերտ մասնիկ - Փորթուգալեան նախկին գաղթավայր՝ Հնդկաստանի մէջ - Հոյլ:
9. Կիլիկեան բերդ - Զայնանիչ - Իրանեան քաղաք - Յետոյ:
10. Ածականակերտ մասնիկ - Պաստառին ծայրերը - Զինակից - Թուլամորթ:
11. Վտտիլ - Ռումբի տեսակ - Իրերայաջորդ տառեր - Ճչա՛:
12. Ազամանդ - 2013-ին՝ Հայաստանի տարուան լաւագոյն ֆուտբոլիստը:
13. Հայոց Կաթողիկոս՝ Սարգիս Բ. - Ֆրանսական քաղաք - Ծառայութիւն:
14. Արտասահմանէն ապրանք բերել - Իգական օտար անուն - Զայնակից գիրեր:
15. 37 - Թել մանելու ձեռային գործիք - Զայնանիչ - Կանգուն երկնաքար:

1 2 3 4 5 6 7 8 9 10 11 12 13 14 15



ԹԻՒ 212 ԽԱՉՔԱՌԻՆ ԼՈՒՐԻՄԸ

1	Դ	Ա	Ր	Ա	Ի	Ա	Ն	Դ											
2	Ի	Ո	Յ		Ս	Ն	Ա	Ս											
3	Մ	Ի	Ք	Ր	Ո	Պ		Դ	Ե										
4	Ո	Տ		Ա	Խ		Մ	Ա	Ր										
5	Դ	Ա	Ի	Ի	Թ	Ս	Ա	Ֆ	Ա	Ր	Ե	Ա	Ն						
6	Տ	Ո	Ի	Ս	Ա		Պ	Լ	Է	Ճ		Ն	Ր	Ա	Ն				
7	Ե	Ի	Ա		Մ	Ն	Ա		Ս	Կ	Ս	Ա	Ս		Ե				
8	Ս	Ի	Տ	Ն	Ի		Ն	Օ		Ա	Ս	Ո	Ն	Ք					
9	Ա	Ն		Ե	Ն	Ք		Դ	Ա	Լ		Ի							
10	Կ		Կ	Ն	Տ	Ա	Կ		Ս		Տ	Ի							
11		Գ	Ո	Գ	Ա	Ի	Ո	Ր		Տ	Ո	Լ							
12	Ժ		Ո	Ա	Տ	Ա	Ն		Ո	Ր	Ս	Ի							
13	Ա	Պ		Մ	Ա	Ր	Ք	Ո	Ի	Է	Պ	Ը	Ր						
14	Մ	Ա	Լ	Ի		Ա		Ս			Մ		Է	Ր					
15		Տ	Ա	Տ	Ա	Ն	Ի	Լ			Չ	Ա	Ր	Կ					
16	Մ	Ա	Կ		Ր		Շ	Ա				Կ	Ո	Ն					
17	Ա	Ղ		Յ	Ա	Ն	Յ			Լ		Ս	Ա						
18	Ն	Ի	Տ	Ա	Լ		Ի		Ե	Ա	Ս	Ի	Ն	Ձ					
19	Ո	Ճ	Ի	Ր		Ս	Կ	Ի	Ի	Ո		Ն	Ե	Ր	Ի				
20	Յ		Լ	Կ	Տ	Ի		Մ	Ա	Ն	Գ	Ա	Ղ						

Համա-Հ.Մ.Բ.Մ. ապան 10-րդ Բանախմբի մեջ
Սրբազան Կրթության և գիտության նախարարության կողմից
Սրբազան Կրթության և գիտության նախարարության կողմից
Սրբազան Կրթության և գիտության նախարարության կողմից

31 Յուլի 2014

